


ՀԱՅ-ԵԿԵՂ ԵՅԻ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ



ՅՈՒՆԻՍ — 1901

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻ ԺԷ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ր Ն

1. Խմբագրական . —	էջ
Քահանայութիւն եւ Կուսակրօնութիւն .	193
2. Քարոզ . — Առաջ ճորտեան եւ Որովանցն .	202
3. Մասեմախօսական . — Հ. Գ. Բ. Լիւնց, Հայք. Ուղեւորութիւնք եւ Ուսումնասիրութիւնք .	209
4. Առաջարկ Քարեկարգութեան Եկեղեցական Մասեմից .	215
5. Թղթակցութիւն . —	
Նանակ Ս. Երուսաղէմէն .	218
6. Քերթում . —	
Երկու Ոստիւնք (շար .)	221

Հանդիսիս բաժանորդագինն է ամեն տեղի համար տարեկան 4 Շիլինգ կամ 5 Ֆրանկ, վեցամսեայ 2 Շիլինգ կամ 2½ Ֆրանկ թղթատարու։ Տանկասանի ֆաղաֆաց մէջ ձեռքէ կը ծախուի հասք՝ Երկու (2) Դանեկանի։

Խմբագրութեան կամ բաժանորդագրութեան վերաբերեալ որ եւ իցէ գրութիւն պէտք է ուղղել առ Խմբագրութիւն Հանդիսիս, հետեւեալ հասցէի .

ARMENIAN RECTORY,

Upper Brook Street,

MANCHESTER.

ՀԱՅ-ԵԿԵՂ ԵՑԻ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

ԹԻԻ 17

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՅՈՒԼԻՍ 1901

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՔԱՀԱՆԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՈՒՍԱԿՐՕՆՈՒԹԻՒՆ

Նորարարական Պարոն Մնացական Ստեփաննոսեան կրօնաթերթիս անդեալ Յունիոի թուով հրատարակեալ առանձին նամակաւ մի շատ կարեւոր խնդիր կը յարուցանէ, որ թէպէտև բազմիցս յարուցուած է, կրկին և կրկին յարուցանելու արժանի է, որքան ժամանակ այդ խնդրոյ ըմբռնուան մեր ժողովրդեան կողմանէ՝ լուսաբանութեան կարօտ է:

Խնդիրն այս է. Քանի որ մեր Եկեղեցւոյ ներկայ սովորութիւնն ամուսնութիւնը անպատշաճ կը համարի վասն եպիսկոպոսաց և վարդապետաց, ինչու՞ համար քահանայք կրնան ամուսնացեալ լինել. ո՞չ ապաքէն քահանայք ձեռնադրութիւն կատարելէն ի բաց եպիսկոպոսի ունեցած բոլոր հոգեւոր կարողութիւններն ունին և կը դործադրեն. կամ ինչպէս կը համաձայնի ներկայ սովորութիւն նախկին Եկեղեցւոյ սովորութեան հետ, որ նոյն իսկ մեր Ս. Լուսաւորչին և նորա մի քանի յաջորդաց ամուսնութիւնը ներելի համարեց: Մեր Արքոյ թղթակից այս առաջին հարցման իբրև հետեւութիւն՝ կը հարցնէ. « Քանի որ քահանային մէկ անգամ ամուսնանալ ներելի է, ինչու՞ համար նա չպիտի կարենայ երկրորդ անգամ ամուսնանալ՝ եթէ հարկը պահանջէ: »

Մի քանի անգամ արդէն առիթ ունեցած ենք այս թերթի մէջ ակնարկելու որ մեր Եկեղեցւոյ ներկայ սովորութիւնը՝ թէպէտ և բազմաժամանակեայ ընդունելութեամբ բոլորովին տարրացած է Հայ. Եկեղեցւոյ մէջ, և ընդհանուր Ազգի մէջ

հաստատուած է այլ ևս, ոչ նախկին (նոյն իսկ մեր) Եկեղեցւոյ սովորութիւնը կրներկայացնէ և ոչ մեր այժմեան պաշտօնական մատենից (Մաշտոցի) համաձայն է:

Տարակոյս չկայ որ Նոր Կտակարանի մէջ կուսութիւնը ուղղակի և անուղղակի կերպիւ կը շատագոյնի և կը յանձնարարուի: Մեր Փրկչի կոյսէ ծնանիւն, Յովհաննէս Մկրտչի կուսակրօն կենցաղավարութիւնն, Յիսուսի խօսքերն առ Մարթէի ԺԲ. 12. (« Են ներքինիք որ զանձինս իւրեանց արարին ներքինիս վասն արքայութեանն Աստուծոյ. ») Յովհաննու Յայտնութեան 144, 000 կուսանաց երանական յիշատակութիւնն և այլ այսպիսիք՝ անուղղակի ակնարկութիւններ են կուսական կենաց գերազանցութեան: Բայց Ս. Պօղոս ամենապարզ կերպիւ կը գրէ (Ա. Կորնթ. է) թէ « բարւոք է ի կին մարդ չմերձենալ. » և ինքն կուսական կեանք վարելով կրփախագի « եթէ ամենայն մարդ լինէր իբրեւ զիս. » այսինքն, ամուրին ընտանեկան հոգերէ ազատ լինելով՝ կրնար աւելի բոլորանուէր Աստուծոյ ծառայել և արտաքոյ կարգի գործունէութիւն ցոյց տալ Եկեղեցւոյ հաստատութեան համար:

Սակայն միւս կողմէ այն ամենէն խտտակրօն Առաքեալն չի մոռնար որ « իւրաքանչիւր ոք զիւր շնորհս ունի յԱստուծոյ, ոմն այսպէս և ոմն այնպէս: » Այսինքն, մէկը կրնայ կուսութեան կոչում ունենալ, և միւսն՝ ամուսնութեան: Մինչդեռ « ամուրեացն և այրեացն » կ'ասէ « լաւ է նոցա թէ կայցեն իբրեւ զիս, » միանգամայն կը յաւելու « ապա թէ ոչ ունիցին ժոյժ, ամուսնասցին. զի լաւ է ամուսնանալ քան զՉեռնուլ ». որ և է խտրութիւն կամ սահման չի գներ Եկեղեցւոյ պաշտօնէից համար. կուսութեան և ամուսնութեան օրէնքն ամենու համար է, աշխարհականի որպէս և հոգեւորականի (սարկաւագի, քահանայի և եպիսկոպոսի) համար մէկ օրէնք կը տիրէ. Ամուրի մնալ եթէ առ այդ կոչում ունի (և « ունիցի ժոյժ »), և ամուսնանալ՝ եթէ ոչ կոչում և ոչ ժոյժ ունի: Այս գրութիւնը լաւ ըմբռնելէն վերջ տղայութիւն կը լինէր Ս. Պաւլոսի խօսքեր — « Պարտ է եպիսկոպոսին միոյ կնոջ այր լինիլ » ուրիշ կերպ մեկնել բայց եթէ եպիսկոպոսն կրնայ ամուսնացեալ լինել: Նախկին Եկեղեցւոյ պատմութիւնը հարիւրաւոր օրինակներ պահած է ամուսնացեալ և ընտանիք ու զաւակունք ունեցող եպիսկոպոսաց եւ հայրապետաց: Տարակոյս չկայ որ նախկին քրիստոնէից մէջ ըստ Ս. Պօղոսի յանձնարարութեան

կուսուցիչները իբրև մեծ անձնուիրույթներն, եւ սրբակեցութեան բարձրագոյն աստիճան կրհամարուէր քան թէ ամուսնութիւնը: Բայց միանգամայն ընդունուած էր որ կուսութիւնը եւ քահանայութիւնը երկու տարբեր կոչումներ էին. « իւրաքանչիւր ոք զիւր շնորհս ունի յԱստուծոյ, ոմն այսպէս եւ ոմն այնպէս. » — մէկը կրնար կուսութեան կոչուած լինիլ առանց քահանայութեան կոչում կամ յարմարութիւն ունենալու, ինչպէս ընդ հակառակն՝ մէկը կրնար քահանայութեան կամ եպիսկոպոսութեան կոչուած լինիլ առանց կուսութեան կոչում ունենալու: Կուսական սրբութեան զգացումն նախկին Եկեղեցոյ մէջ շատ զօրացած էր՝ գլխաւորապէս այն պատճառաւ որ այն ժամանակի հեթանոս ազգաց ամենամեծ զեղծումներն ամուսնական կենաց դէմ եղածն էին, որով այն աստիճան մարմնաւոր ցանկութեան եւ հեշտախտութեան անձնատուր լինելն՝ սրբաւէր քրիստոնեայներն հակառակ ծայրայեղութեան մղեց, որոցմէ շատեր ամուսնութիւնը խոտելի եւ անսուրբ համարեցին. անապատներն միայնակեաց ճգնաւորներով լցուեցան եւ երբեմն եւս դեռ աւելի սոսկալի ծայրայեղութեանց դիմեցին, եւ սուրբ ու իմաստուն վարդապետաց մէջ Որոզինէս մի զբանուեցաւ որ ինքզինքն ներքինացոյց իւր ժամանակի մոլեւումնութեամբ յաղթահարեալ: Բայց Աստուծոյ նախախնամութիւնը միշտ պահպանած է ճշմարտութիւնն՝ Ս. Եկեղեցոյ մէջ, եւ Որոզինէսի այդ ծայրայեղութիւն ամենախիստ կերպով դատապարտեցաւ ողջամիտ քրիստոնէից կողմէ՝ այնպէս որ նորա ունեցած բոլոր միւս գերազանց արժանիքն կերպիւ իմն ջրուեցաւ այդ մէկ յանցանքով: Ոչ եւ կրպակսէին Որոզինէսի զգացումներն ունեցող մարդիկ: Նոյն իսկ Նիկիոյ սուրբ ժողովոյն մէջ յամբ 325 շատեր փորձեցին կուսութիւնն պարսաւորիչ առնել, սակայն շնորհիւ Պափնոսիոս եպիսկոպոսի եպիսկոպոսին, որ կրօնի համար ամենածանր հալածանք կրած էր ժամանակին, ե իւր ամբողջ կեանքն կուսակեաց ճգնութեամբ անցուցած էր, Եկեղեցոյ մինչև ցայն վայր տիրող սովորութիւնն հաստատուեցաւ, եւ ամուսնութիւնն հոգեւորականութենէ բոլորվին անշատ կոչում լինելն ընդունուեցաւ, եւ կղերականաց ընդհանրապէս ազատութիւն տրուեցաւ՝ ամուսնացեալ լինել կամ ամուրի: Բայց եւ այնպէս չենք կրնար ուրանալ որ կուսութիւնն իբրև մի արտաքոյ կարգի անձնուիրութեան եւ կրօնասիրութեան ապացոյց՝ մեծ յարգ ունէր չոր-

րորդ և հինգերորդ դարու քրիստոնէից մէջ . և քահանայ-
ութեան կամ եպիսկոպոսութեան կոչում կամ յարմարու-
թիւն չունեցող հազարաւոր արք և կանայք կուսական կեանք
կրճարէին , որովհետեւ համոզուած էին թէ կուսութիւնն է
սրբակեցութեան ամենաբարձր աստիճանն , ինչպէս որ է
իրաւամբ անձնուիրութեան ամենաբարձր օրինակն :

Կուսութեան այս օրրստօրէ տարածւող ժողովրդականու-
թիւնն ընականաբար Եկեղեցւոյ պաշտօնէից մէջ համեմա-
տաբար աւելի տարածուեցաւ քան թէ հասարակ ժողովրդ-
դեան մէջ , և մի հոգեւորականի բարոյական արժանիքն շատ
անգամ նորա ամուսնացեալ կամ ամուրի կեանք վարելէն
կըզատուէր , և որքան բարձր լինէր նորա պաշտօն , այն-
քան աւելի անձնուիրութիւն կըպահանջուէր ի նմանէ :
Սակայն Հայ. Եկեղեցւոյ համար կանոնական զօրութիւն ու-
նեցող առաջին երեք տիեզերական ժողովներ եկեղեցակա-
նաց ամուրիութեան համար որեւէ որոշում չարին . ոչ ևս,
որքան գիտեմք , ուրիշ ազգային ժողով կամ հեղինակաւոր
իշխանութիւն մեր եկեղեցականաց վերայ ամուրիութեան
պարտաւորութիւն դրած է : Ոչ ևս միւս քրիստոնեայ ազ-
գաց և Եկեղեցեաց մէջ այս մասին հաստատուն և կանո-
նական օրէնք կար մինչեւ եօթներորդ դարու վերջն : Այս-
ինքն , մինչեւ եօթներորդ դարու վերջն քրիստոնեայ ազգաց
մէջ ամուսնութիւն կամ կուսութիւն որեւէ եկեղեցական պաշ-
տօնէի պարտաւորիչ պայման չէր համարուեր . եպիսկոպոս,
քահանայ կամ սարկաւազ կրնար ամուսնացեալ լինել կամ
ոչ : Առաջին անգամ յամի 680 Տրուլեան ժողովոյ մէջ որոշ-
ուեցաւ որ միայն քահանայք և սարկաւազունք կրնային
ամուսնանալ նախ քան զձեռնադրութիւն . սակայն եպիսկո-
պոսունք չպիտի ամուսնանային , և ամուսնացեալ եպիս-
կոպոսաց կիներ ևս պարտաւոր էին այդ թուականէն վերջ
վննք մտնել : Թէպէտ և մեզ համար որեւէ կանոնական
զօրութիւն չունի Տրուլեան ժողովն , բայց ուշադրու-
թեան արժանի է եւ եօթներորդ դարու վերջն մեր Եկե-
ղեցւոյ սովորութիւնն այս մասին յիւրեան կըբերէ՝ սոյն
ժողովոյն 33րդ կանոնն , որ մասնաւորապէս Հայոց դէմ ուղ-
ղեալ է՝ եւ կըզանգատի թէ Հայոց հոգեւորականաց որդիք
իւրեանց մարմնաւոր հարց կըյաջորդեն եկեղեցւոյ ժառան-
գաւորութեան մէջ՝ եպիսկոպոսաց եւ քահանայից որդիք
իւրեանց հարց վիճակին եւ թաղին եպիսկոպոս եւ քահա-
նայ կըլինին , որով շատ անգամ անարժան մարդիկ եկե-

ղեցական պաշտօնի կրճատման : Ուրեմն եօթներորդ դարու սկիզբն Հայոց մէջ եպիսկոպոստունք եւ քահանայք (եթէ ոչ ամենեքեան , գէթ ոմանք) ամուսնացեալ էին : Քանի որ Տրուկեան ժողով մեր Եկեղեցւոյ համար պարտաւորիչ հանգամանք չունի — վասն զի Հայք Քաղկեդոնի ժողովքէն (յ. 451) վերջ՝ միւս Եկեղեցիներէն պաշտօնապէս զատուեցան, եւ մեր ներկայ սահմանադրութիւնը միմիայն առաջին երեք ժողովներն կրճատաչէ իբրեւ տիեզերական եւ պարտաւորիչ — այդ ժողովոյ կանոնադրութիւնն ի մասին ամուսնութեան եւ ամուրիութեան կղերի մեր Եկեղեցւոյ համար զօրութիւն չունի : Ոչ եւս ծանօթ է մեզ որեւէ ուրիշ օրէնք Ազգային Եկեղեցական ընդհանուր ժողովոյ որոշմամբ զոր կարկնանք մասնացոյց անել իբրեւ մեր Եկեղեցւոյ օրէնք : Շատ հաւանական է որ երկար դարեր տեւեց մեր մէջ առաջին երեք տիեզերական ժողովոց տուած ազատութիւն ի մասին ամուսնութեան կղերականաց , այնպէս որ ոմանք կ'ամուսնանային , իսկ այլք ամուրի կը մնային : Ո՞չ ապաքէն կրկարդանք թէ Ս. Գրիգոր Նարեկացւոյն հայրն (իններորդ դարու մէջ) Անձեւացեաց խոսրով Եպիսկոպոսն էր : Ինչ որ ալ մեր կուսական պատմագիրներ գրելու լինին՝ իբր թէ Ս. Գրիգոր եւ իւր որդիք ու թոռունք որպէս եւ խոսրով եւ այլք իւրեանց կիներ արձակած վանք զրկած լինին եպիսկոպոսանալէ յառաջ , մեզ համար աւելի դիւրին է համարել թէ այդ պատմագիրներ կերպիւ իւր սխալած են քան թէ այդ աստուածամերձ հայրապետաց նկատմամբ ենթադրել իբր թէ իւրեանց կիներ արձակելու սոսկալի անիրաւութիւնը գործած լինին հակառակ աստուածային եւ աւետարանական պատուիրանին զոր Ս. Պօղոս կը հաստատէ. «Այլ կանամբեսցն պատուիրում ոչ ես , այլ Տէր , կնոջ յառնէ մի՛ մեկնել , և առն զկին իւր մի՛ թողուլ :»

Նախընթաց հետազօտութենէ տեսանք որ Նոր Կտակարանը ամուրիութիւն չի գնեւ եկեղեցւոյ պաշտօնէից վերայ , ոչ եւս նախկին Եկեղեցին մինչև եօթներորդ դարն ամուրիութիւն պահանջած է իւր կղերէն . իսկ Հայ. Եկեղեցին մինչև ցայսօր չունի որեւէ մի կանոնական օրէնք այդ մասին . այլ ընդհակառակն կարելի է մեր Աւագ և Մայր Մաշտոցներէն ապացուցանել որ մեր Եկեղեցւոյ սահմանադրութիւնը կընտրէ եպիսկոպոսաց ամուսնացեալ լինել . մի վիճակի առաջնորդ պէտք է ըստ Մաշտոցի նոյն վիճակի քահանայներէն ընտրուի , ոչ թէ վանականներէն . և վանա-

կանաց դէմ խիստ արգելք և անէծք կը դնէ վիճակի մը առաջնորդութիւն կամ թաղի ժողովրդեան հովուութիւնը վարել : Ըստ Աւագ Մաշտոցի հետեւեալ հարցուպատասխան տեղի կունենայ ի մէջ Հայրապետին և խարտաւիակին . —

Եղբա՛ւք , արդարութեա՞մբ է գատելդ ձեր . — Մեք գատիմք և խնդրեմք՝ զի Աստուած եւ հայրդ մեր տացէ մեզ զեզբայրս մեր առաջնորդ և հովիւ :

Ձի՞նչ պատիւ ունի . — Քահանայութեան :

Քանի՞ ամս ունի ի քահանայութեան . — Տասն (աւելի կամ պակաս) :

Առեա՞լ է զպսակ ամուսնութեան . — Պարտախանէ Խարտաւիակն զուշին :

Յետոյ կը կարգան ժողովրդեան վկայութեան խնդրագիրն որով կը խնդրեն որ իւրեանց մէջ սպրոզ և ծանօթ այս ինչ քահանայն եպիսկոպոս ձեռնադրուի իւրեանց վիճակի վերայ , որոյ քննութիւնը տես կրօնաթերթիս Թիւ ԺԲ. էջ 33 :

Այս կէտ աւելի լաւ կը պարզուի կրք Հայրապետն կը դառնայ եպիսկոպոսացուին կը հարցնէ . —

Եղբա՛յր , ճշմարտութեա՞մբ եկիր յայսքան վաստակս : — Տէր , չեմ բաւական այսմ շնորհի , սակայն եղբարքն իմ ընտրեցին զիս :

Ի՞նչ արդեօք թէ յի՞նչ կոչիս . — Ուսո՛՛ վիս Տէր :

Աստ Հայրապետն այլ եւ այլ խրատներ կը տայ՝ անարժան մարդիկ չձեռնադրելու համար , և յետոյ կը յաւելու այս կարեւոր խօսքեր . — « Ձեր աշացալանիմ հայել ի՞նչ յառնուին զպարեան զայս . և մի՛ լիցին խոստացեալ յանապարհան կեանս , զի զէ արժան ըսողուլ զխոստումն քո և թալ յաստիճանս յայս : Աննպաստիս և վանտիս հոմանունն բառեր են , և միշտեւ յայսօր մեր մէջ վանքեր կան որ անապատ կը կոչուին : Ուրեմն ասել է որ վիճակաց առաջնորդներ պէտք չէ որ անապատական կամ վանական կեանք վարելու ուխտ արած լինին . մէկ խօսքով , պէտք է որ ամուսնացեալ լինին կամ ամուսնանալու ազատ լինին : Արդէն Հայրապետի չորրորդ հարցումն թէ Առեա՞լ ե՞ զպսակ անուսնութեան , » ցոյց կը տայ որ նուիրեալն կրնայ կամ ամուսնացեալ կամ ամուսնանալու ազատ լինել . ապա թէ ոչ այս հարցում բողոքովն աւելորդ էր :

Ամենէն հետաքրքիր և ամեն տարակոյս փարատող կէտն՝ Մայր Մաշտոցի հետեւեալ անէծքն է : Կուսակրօն քահանայից կը պատուիրէ « մի լինել ամենեւին ծանօթ կանանց . »

և ապա կըյաւելու . « Վասն որոյ կանոնս է սուրբ հայրապետացն թէ , կուսակրօն ասանայ թէ սուրբնորք լեցի ժողովրդեան . անէ՛ծեալ է ինքն և ժողովրդն էր : » — Այս անէծք որուէ տարածայն մեկնութիւն կամ երկդիմութիւն չի վերցնիր : Միայն կըզարմանանք թէ ի՞նչպէս մնացեր է Մայր Մաշտոցի մէջ այսչափ ժամանակ , մինչդեռ դարերէ ի վեր մեր Ազգն այս կանոնի ճիշդ հակառակը կըզործէ :

Հիմա դառնանք Պարոն Մնացականի նամակի այն մասին թէ « Ե՞րբ էր որ այդ օրէնք խափանուեց եպիսկոպոսաց և վարդապետաց մասին , և առ ի՞նչ պատճառի : »

Այս բոլոր հին աւանդութեանց և Մաշտոցի վկայութեանց հակառակ , տարակոյս չկայ որ մեր այժմեան Եկեղեցւոյ մէջ ընդհանուր ընկալեալ սովորութիւն դարձած է որ կուսակրօն (վանական կամ անապատական) քահանայք կամ վարդապետք լիճակաց մէջ քարոզչութեան եւ հովուութեան պաշտօն կըվարեն , եւ եպիսկոպոսներն այժմ միմիայն վանականներէ կընտրուին : Շատ դժուար է թուական որոշել թէ ե՞րբ մեր Եկեղեցւոյ նախկին սովորութիւնը փոխուեցաւ . ոչ եւս կարելի է ասել թէ միանգամայն կամ մէկ դարու մէջ փոխուեցաւ . այլ հետզհետէ պարագայներ յառաջ եկան , որք անզգալպէս ներկայ գրութեան տեղի տուին : Այս պարագայներէն երկուքն ամենէն կարեւորներն են , եւ ամենէն հաւանական կը թուին : Նախ՝ Յունաց Եկեղեցւոյ օրինակն : Թէպէտ եւ Քաղկեդոնի ժողովէն յետոյ Հայք պաշտօնապէս զազրեցան յարարութիւններ ունենալ Յունաց Եկեղեցւոյ հետ , սակայն Հայք ազատամտութեամբ իմն այդ թուականէն յետոյ շատ բաներ փոխ առին Յոյներէն , եւ իւրեանց Եկեղեցւոյ մէջ այլ եւ այլ բարեփոխութիւններ մտցուցին ըստ Յունական եւ երբեմն եւս ըստ Լատինական Եկեղեցւոյ օրինակին , առանց այդու միութիւն հաստատելու կամ նոցա գերիշխանութիւնը կամ գերազանցութիւնը ճանաչելու : Ինչպէս տեսանք , արդէն շատ կանուխէն կուսութեան գերազանցութեան գաղափարը մուտ գտած էր քրիստոնեայ հասարակութեանց մէջ , եւ երբ Հայք կը տեսնէին որ Յունաց մէջ կուսակրօնութիւնը հետզհետէ կընդհանրանար եկեղեցականաց մէջ , եւ հուսկ յետոյ Տրուլեան ժողովով մէկ զասկարգի (եպիսկոպոսաց) համար պարտաւորիչ կըդառնար յօթներորդ դարու , Հայ եպիսկոպոսունք եւս չուզեցին իւրեանց զրացի Յոյն եպիսկոպոսներէն վար մնալ այդ գերազանց անձնուիրութեան մասին :

Առանց Եկեղեցւոյ պահանջեալ եւ անխուսափելի օրէնք նկատելու, ի սկզբան շատ եպիսկոպոսներ յօժարակամ կուսակրօն կեանք վարեցին (առանց վանական կամ անապատական լինելու)։ Բայց ինչպէս գիտեմք մինչեւ սասներորդ դարու սկիզբներն եւս ամուսնացեալ եպիսկոպոսներ կային մեր մէջ :

Սակայն մի ուրիշ պատճառ, որ ամենէն աւելի զօրաւոր էր, մեր Եկեղեցւոյ ներկայ սովորութիւն յառաջ բերաւ, և նոյն այդ պատճառն է որ մինչ ցարդ այդ սովորութեան մէջ կը պահէ զմեզ և կը վարենամք որ պիտի պահէ ընդ երկայն ամս : — Ազգային պատմութեան ծանօթ բազմապատիկ դժբաղդութիւնք, և այդ դժբաղդութեանց արդիւնք եղող տգիտութեան խաւարն որ սարածուեցաւ ընդհանուր Ազգին վերայ բազում դարեր, որով կանամբի քահանայք նման իւրեանց հօտին ինկան խոր սպիտութեան եւ երբեմն եւս մոլութեանց մէջ : Միւս կողմանէ վանքերն եւ անապատներն եւս դարձեալ ըստ մեծի մասին Յունական ազդեցութեամբ մեր մէջ բաղմացան, և պէտք է խոստովանիլ որ մեր Ազգային ընդհանուր անկման եւ աղէտից միջոցին, վանքեր ու վանականներ կրցան փոքր ի շատէ իւրեանց դիրքն ու վարկն մնացեալ ազգային հաստատութիւններէն աւելի լաւ պահել պահպանել : Մինչդեռ խոր խաւար կը պիտէր ամբողջ հասարակութեան վերայ, վանքի առանձնութեան մէջ ուսումնասէր միտայակեաց մարդիկ բարեպաշտական կրթութեանց հետ մէկ տեղ Ս. Գիրքն ու նախնեաց մատեններն կը նորոգեցին եւ կուսումնասիրեցին, եւ երբ այլ եւս անկարելի կը լինէր աշխարհիկ քահանայից մէջէն արժանաւոր եպիսկոպոս ընտրել՝ ժողովուրդը կը ստիպուէր վանականաց մէջէն ընտրել իւր եպիսկոպոս : Այս դրութիւն այնքան յառաջ գնաց մինչեւ մեր ժողովուրդը մոռցաւ այլ եւս որ քահանայից մէջէն ընտրելու էր իւր զխաւար հովիւ, եւ հետզհետէ Ս. Անտոնի կնգուղն — որ է մեր բարձրագոյն եկեղեցականաց վեղարն — եպիսկոպոսի անհրաժեշտ պաշտօնանշանն համարուեցաւ : Նա մոռցաւ որ մինչեւ սասներորդ դարն Վեդարաւոր եպիսկոպոսն բացառութիւն կը կազմէր : Այլ եւս բացառութիւնն օրէնք դարձաւ եւ այնպէս եւս պիտի մնայ որքան ժամանակ կանամբի քահանայութիւնն տգիտութեան ազամանդեայ կապանքներով կապուած կաշկանդուած է, որքան ժամանակ մեր այս « ժողովրդական » կարծուած Եկեղեցւոյ ժողովուրդն ի մա-

սին կրօնի անթափանցելի ազիտութեան մէջ կ'ապրի, և իւր հովիւներէն ոչ այլ ինչ կը պահանջէ բայց եթէ շոյել շողորորթել, մուրալ և սարկամալ: այսպէս պիտի մնայ որքան ժամանակ ժողովուրդ ու եպիսկոպոստունք կը շարունակեն տգէտ ու անարժան քահանայից թիւը բազմացնել, և հոգ չեն տանիր պարտ ու պատշաճ կերպով քահանայացու պատրաստել:

Մեր յարգելի թղթակցի միւս հարցում թէ ընդէ՞ր այրիացեալ քահանայք երկրորդ անգամ ամուսնանալու իրաւունք չունին՝ արդէն անուղղակի կերպով պատասխանեալ է նախընթաց հետազոտութեամբ: Երբ Յունական գրութիւնը ամբողջովին Հայոց Եկեղեցւոյ օրէնք դարձաւ, բնականաբար այդ կէտն ևս ընդունուեցաւ: Ինչ կանոնական զօրութիւն որ մեր կղերի ամուսնութեան և ամուլիութեան այժմեան ընդհանուր օրէնք մեզ համար ունի, նոյնն ունի և այդ արգելական օրէնք:

Նախընթաց հետազոտութեամբ բնաւ չաշխատեցանք ներկայ սովորութիւնը բարեփոխելու որեւէ առաջարկ սնել, այլ ջանացանք Ս. Կրոց, Եկեղեցական պատմութեան և կանոնական զրոց վկայութեամբ բացատրել ներկայ սովորութեան վարդապետն. բայց սարակոյս չկայ որ մեր Եկեղեցին այս մասին բարեփոխութեան կարօտ է, ինչպէս որ մեր Ազգի հոգեւորականաց սակաւ ծանրացող դժգոհութեան միմունջներն և աշխարհականաց օրըստօրէ սաստկացող բողոքի աղաղակներ յայտնապէս կը պահանջեն բարեփոխութիւն այս մասին: Պիւսի աշխատինք ուրիշ անգամ ցոյց տալ թէ որոնք են բարեփոխելի կէտերն, և այդ բարեփոխութիւն ինչ կերպով կարելի է և պէտք է կատարել:

Միեւնոյն ժամանակ պէտք է խնդրենք մեր Սրբազան և Սուրբ Հայրերէն որ բարեհաճին իւրեանց դիտողութիւններ այս մասին զրկել մեզ ի հրատարակութիւն: Մեր ջանքն է Հայ. Եկեղեցւոյ օրուսն, և կաշխատինք որքան կարելի է նախկին Եկեղեցւոյ սահմանի և օրինաց մէջ մնալ, սակայն մեր աշխատութիւն աւելի արգիւնաւոր պիտի լինէր եթէ մեր հոգեւոր հայրեր գմեղ միայնակ չթողնէին այս նուիրական ձեռնարկութեան մէջ:

Ք Ա Ր Ո Չ

ԱՌԱՎ ՅՈՐԵՆՈՅ ԵՒ ՈՐՈՄԱՆՑՆ

(*Խօսեցեալ յԱզգային Եկեղեցոյ Մանչեսթրի ի Ե. Կիւրակիի զկնի Հոգեգալստեան :*)

Տէր , ո՞չ սերմն բարի սերմանցեր յագարակին քում . արդ ուսի՞ ունիցի զորումն :—*Մատթ. ԺԳ. 27.*

Տէրն մեր Յիսուս Քրիստոս Երկնից Արքայութիւն , այսինքն իւր սուրբ Եկեղեցին , կընմանեցնէ մի ազարակի , որոյ վերայ ազարակատէրն լաւ ցորեն կըցտնէ : Իսկ թշնամին՝ ազարակի մէջ աշխատող մշակները քնացած տեսնելով՝ գաղտ ազարակը կըմտնէ և ցորենի մէջ որոմն կըցտնէ ու կ'երթայ : Երբ խոտը կըբարձրանայ , մշակներն անիջապէս կըտեսնեն որ ցորենի մէջ շատ որոմ ևս կայ , և զարմայմամբ իւրեանց մեծաւորին կըյայտնեն , միանգամայն առաջարկելով որ երթան անմիջապէս որոմն արմատախիլ անեն . բայց ազարակատէրն խոհեմութիւն կըհամարի թող տալ որ երկուսն ալ աճին մինչեւ հունձի ժամանակ , երբ որոշումն դիւրին կըլինի և ցորենն ևս չի յնասուեր : Առակի մեկնութիւնը պարզ է . ազարակն աշխարհս է որոյ մէջ Եկեղեցին կըգտնուի , ազարակատէրն Քրիստոս է որ եկաւ ցորենի , այսինքն ճշմարտութեան սերմեր ցանեց՝ քարոզելով , առաքեալներ , հովիւներ , այսինքն մշակներ , կարգելով : Թշնամին ոտտանայն է որ որոմն , այսինքն ճշմարտութեան հակառակ սերմեր , կըցտնէ Քրիստոսի ժողովրդեան մէջ : Մշակներն հրեշտակներ կամ Եկեղեցոյ հովիւներն են , որ կուզեն անմիջապէս որոմն արմատախիլ անել , այսինքն , Եկեղեցիէն ջնջել :

Չարմանալի է որ Աստուծոյ բոլոր արարածներէն միայն մարդն է որ ժամանակ առ ժամանակ Աստուծոյ հաստատեալ օրինաց դէմ կըմեղանչի , բնութեան օրինաց հակառակ կըվարուի , իւր խղճի ուղիղ թելադրութեանց չի հնազանդեր , բարւոյ գերազանցութիւնն գիտնալով և ընդունելով հանդերձ՝ դարձեալ չարն կ'ընտրէ . չար գործն աւելի սիրելի է նմա քան զբարին , մոլութիւն աւելի հաճելի քան զառաքինութիւն :

Մարդոյն միտումների այս տարզրինակ հանգամանքէն

կերեւի որ մի խանգարում մտած է նորա բնութեան մէջ՝ մի խանգարում որ անկարելի է ենթադրել թէ նա իւր սկզբնական բնութեան մէջ ունէր . քանզի անկարելի է ենթադրել թէ մարդ, որ Աստուծոյ ամենայն արարածոց թագաւորն է՝ ամենէն աւելի բարձրն և վսեմն, մի այսպիսի անազին թերութեամբ ստեղծուած լինէր իւր Արարչէն : Հայհոյութիւն կրլինի Աստուծոյ սկզբնագործ համարել այս մեծ պակասութիւն, մինչդեռ նորա բոլոր արարածներ, կենդանի, կիսակենդան և անկենդան՝ համեմատաբար կատարեալ են, իւրեանց բնութեան օրինաց համեմատ կրնութանան, իւրեանց նպատակին կրժառայն, իւրեանց կոչման կրնետեւին : Այնքան տարօրինակ է մարդոյս այս զանազան բնութիւն, որ երկնի հրեշտակներ անգամ հիացմամբ կըհարցնեն . « Տէր, ո՞չ սերմն բարի սերմանեցիր յազարակին քում, արդ ուստի՞ ունիցի զորումն : » Նոյն որո՞մ ցանող թշնամին, որ մինչեւ ցայսօր Կրիստոսի պատուական արտերի մէջ որո՞մ կըցանէ՝ սկիզբէն նախանձեցաւ մարդոյ կատարելութեան վերայ, և սկիզբէն իսկ իւր չարութեան որումն ցանեց նորա բնութեան մէջ :

Այս չարեաց մի ճար գնելու համար, մարդկային թշուառացեալ բնութիւնն բարձրացնելու համար, Կրիստոս աշխարհ եկաւ և մարդացաւ, Սուրբ Եկեղեցւոյ հաստատութեամբն՝ շնորհեց մեզ այն միջոցներն որով հնար է մեզ բարձրանալ Ազատային նախկին փառաց և կատարելութեան, զգուշանալ սատանայի պտորանքներէն, միշտ հսկել մեր մտաց և հոգւոյ արտերի վերայ և թող չտալ որ որոմացան թշնամին մեր բնութեան մէջ այլ ևս աւերումներ գործէ :

Բնական գիտութիւնը մեզ կուսուցանեն թէ ծնողաց յատկութիւնը ժառանգական են. նոր սերունդն ընդհանրապէս կրմիտի այն յատկութեանց, լաւ կամ վատ, ֆիզիքական կամ մտաւոր, զորս իւր ծնողք ունէին, և եթէ արտաքին պարագայք ևս նպաստեն և նոյն ուղղութիւն ունենան, զաւակն ևս կունենայ հօր կամ մօր յատկութիւնն : Այս պատճառաւ կրտսններք որ քաջառոյժ ծնողաց զաւակունք ևս քաջառոյժ կրլինին, եթէ արտաքին պարագայք (որպէս սնունդ, օդ և այլն) հակառակ չլինեն առողջարանական օրինաց, այլ յաւէտ նպաստեն : Հիւանդ ծնողաց զաւակունք՝ հիւանդանալու միտում կ'ունենան, և եթէ հիւանդութիւն յառաջ բերող պարագայք զգուշութեամբ չը հեռացուին ի նոցանէ, նոքա անպատճառ կըհիւանդանան : Սոյնպէս ևս մարդս

ժառանգաբար ունի չարամէտ բնութիւն . եթէ զգուշութեամբ չարէն չընկռանանք և բարւոյն չըմօտենանք , անպատճառ Աղամային ժառանգութեան համեմատ մեղաց մէջ պիտի ընկնենք , և առաքինութենէ և արդարութենէ պիտի օրրատօրէ հեռանանք : Այս կատարելութեան հասնելու միակ միջոցն , մեղաց գերութենէն ազատուելու միակ ճարն է՝ Եկեղեցւոյ օրինաց հնազանդել , փրկութեան այն շնորհներէն օգտուիլ զոր Քրիստոս իւր սուրբ Եկեղեցւոյ միջոցաւ մեզ կ'ընձեռէ , իւրացնել այն կատարելութիւններն զոր մեր նախահայրն Ադամ իւր սնկումէն յռաջ ունէր և զորս Երկրորդն Ադամ , որ է Քրիստոս , կընկերայացնէ մեզ իւր կեանքով և քարոզութեամբ : Միայն նա կարող է մեր բնութեան մէջէն այդ որոմներն ի բաց խլել . ի զուր կըզիմենք ուրիշ միջոցներ , ի զուր կըկարծենք թէ այս ինչ կամ այն ինչ աշխարհային միջոց աւելի լաւ և աւելի հանգիստ միջոց է . ի զուր կըջանանք մշակների անխոհեմութիւնն գործել և շտապամբ կուզենք անմիջապէս որոմն քաղիլ առանց մտածելու որ գուցէ այնու « և զցորեանն ընդ նմին ի բաց խլիցէք : » Ուրեմն գիտենք առ ազարակատէրն և ցաւօք խոստովանինք . « Տէր , ո՛չ սերմն բարի սերմանեցեր յազարակի քում , արդ ուստի՞ ունիցի զորոմն : »

Ի՞նչ լաւ օրինակ , ի՞նչ յարմար բազդատութիւն . ցորենը որոմի մէջ և քրիստոնեայն աշխարհիս բազմատեսակ փորձութեանց մէջ : Մանկական հասակէն սկսեալ չարն ու բարին շարունակ կըմաքառին մարդոյ բնութեան մէջ . բարի խրատ ստանալէն յետ , յաճախ այդ խրատին հակառակ մի ներքին շար խորհուրդ ևս կընկերայանայ նորս մտաց մէջ . բերանովն կըխոստովանի բարին և լաւն , այլ մարմնը կըձգտի յաւէտ դէպ ի չարն :

Մարդկային բնութեան այս տարօրինակ վիճակի զգուշաւոր ուսումնասիրութիւն՝ զմեզ բարոյապէս զօրացնելու մեծապէս կընպաստէ : Մի այսպիսի ուսումնասիրութիւն է այն սուրբ խորհուրդն զոր մեր Եկեղեցին հաստատեր է , և իբրև Ապաշխարութեան խորհուրդ ծանօթ է բարեպաշտ ժողովրդեանց : Ապաշխարութիւնն նման է վտճառականաց հաշուաքնութեան : Ինչպէս ժիր առեւտրականն ամէն երկկոյ մի համառօտ ակնարկ կըձգէ իւր այն աւուր սռեւտրական գործառնութեանց վերայ , կամ շարթու կամ ամսոյ վերջն մի ընդհանուր հաշուեկշիռ կըչինէ սեռանելու համար թէ արդիւնքն կամ վեաան ո՛րքան եղած է այդ միջոցին . նոյնպէս իւր

հոգւոյն համար փոյթ տանող քրիստոնեայն ժամանակ առ ժամանակ իւր հոգւոյ տուժարներն կըբանայ, և իւր շահ ու շիւսան, կըլեւնուածքն կըհաւասարակչո՞ւն, շիւսու պատճառն կըբառնո՞ղէ և զգուշութեան միջոցներէ կըձեռնարկէ, շահ-ուածէն կ'օգտուի և կըջանայ աւելի ևս շահուիլ: Կըտեսնէ՞ք թէ մարմնուոր և աշխարհային բաների մէջ ո՞րքան զգուշուոր ենք, ո՞րքան բծախնդիր ենք. բայց հոգեւոր բաների մէջ ևս արդեօք նոյն եռանդն ունի՞նք: Աշխարհային շահու վերայ կըհրճուինք, կ'ուրախանանք, և նիւթական կորուստի ու շիւսու համար կըտրտմինք և անմխիթար ենք. արդեօք հոգեւոր շահու համար ևս նոյնքան հոգ կըբանինք, հոգեւոր շիւսու և կորստեան վերայ նոյնքան կըտրտմինք: Ժամանակաւոր բարիքներ ձեռք բերելու համար մեր ամբողջ ոյժ ու կարողութիւն կընուիրենք. միշտ կըխոտտովանիմք թէ այդ ամէն փուճ է, անցաւոր և խաբուսիկ է. սակայն յաւիտեանական բարիք ձեռք բերելու համար ոչ ժամանակ ունինք ոչ ոյժ ու կարողութիւն, այն հոգեւոր բարիքներ որ մշտնջենական և իրական են՝ միշտ համար շատ քիչ հրապոյր ունին: Ահա այս է լուսաւորեալ համարուած դարուս զմբողջ կացութիւն, որոյ զաւակունք կ'աշխատին մարմինը լուսաւորել և հոգին խաւարի մէջ պահել, և կըկարծեն թէ շատ աւելի բարձր են քան թէ հին դարու հոգեւոր ժողովուրդներ:

Ապաշխարութեան խորհուրդն մի լաւ միջոց է, մի յարմար առիթ է այս մեծ հաշուաքնութիւնը կատարելու, ապագայ վասնդներէ ազատ մնալու և սատանայի մեքենայութեանց դէմ դնելու: Այս է Եկեղեցւոյ սահմանեալ միջոցն՝ քննելու մեր առանձնական ընթացքն, մեր ընթացք այլոց հետ, մեր ընթացք առաջի Աստուծոյ:—

Մեր առանձնական ընթացք մեր հոգեւոր կենաց առաջնակարգ տեղն կըբռնէ: Պօղոս Առաքեալն առ Հռովմայիցիս դրած թղթոյն մէջ կ'ասէ թէ Հեթանոսք ևս որ առ երևութին աստուածազիր օրէնք չունին՝ յաւուրն յեանուած անպատասխանատու չեն. խղճմտանքն նոցա օրէնքն է, և իւրեանց խղճի մտաց համեմատ պատասխանատու են Աստուծոյ: Այժմ՝ եթէ հեթանոսք խղճմտանքի համեմատ պիտի պատասխան տան, ո՞րքան առաւել մենք քրիստոնեայքս որոց խղճմտանքն աւելի ևս զօրացած է աստուածազիր օրէնքներով և աստուածային յայտնութեամբ: Շատ բաներ կան աշխարհիս մէջ զոր կըխորհինք և բողոքովին գազանապէս կըզործենք. մեր միակ զատաւորն զինի Աստուծոյ մեր

խիղճն է . և այդպիսի դիպաց մէջ պիտի տեսնենք որ մեր ամենէն անաչառ և արդար դատաւորն մեր խիղճն է : Խղճիդ հարցրուր՝ այս ինչ գործ արդար է՞ր, իրաւացի է՞ր . բոլորովին առանձնացած քո սրտի խորքերուն մէջ՝ խորհելով հարցուր, և պիտի ճիշդ պատասխանը գտնես : Ուստի ապաշխարութեան առաջին աստիճանն է խղճի քննութիւն . ստուգելէն վերջն տրտմել այն բոլոր զանցառութեանց համար զորս գործած ենք մեր խղճի դէմ :

Երկրորդ՝ քննենք մեր ընթացք այլոց հետ . մեծաւորի, հաւասարի կամ ստորակայի հետ : Արդեօք իբրեւ մեծաւոր մեր ստորակայ եղող անձանց հետ պէտք եղածին չափ սիրով և քաղցրութեամբ վարուած ենք, թէ հպարտութեամբ և գոռոզութեամբ : Իբրեւ տէր ընտանեաց՝ մեր տան ու մեր գերդաստանին պէտք եղած խնամք տարե՞ր ենք՝ նոցա պէտքերն հոգալու, նոցա մտաւոր և հոգեւոր յառաջդիմութեան համար աշխատելով, և քրիստոնէավայել սիրով և խաղաղութեամբ կառավարելով, մեր զաւակների մտաւոր և հոգեւոր զարգացման համար փոյթ տարե՞ր ենք, ջանացե՞ր ենք որ նոքա իւրեանց ուղղային լեզուն որ միանգամայն իւրեանց եկեղեցական լեզուն է՝ ուսանին, հոգ տարե՞ր ենք որ նոքա վաղօրօք Աստուծոյ տունն յաճախեն, Աստուծոյ այլն սուրբ խորհրդոց մերձենան բարեպաշտութեամբ և երկիւղածութեամբ :

Արդեօք իբրեւ մարդ մեր հաւասարների հետ պարսուպառայած քաղաքավարութեամբ և յարգանօք վարուե՞ր ենք, թէ ի նոցանէ աւելի մեծ երեւնալու բաղձանքով՝ մեծատութեամբ և արհամարհանօք վարուելը ենք մեր ընկերների հետ :

Կամ իբրեւ ստորակայ՝ պէտք եղած խոնարհութիւնն ցոյց տուած ենք մեր մեծաւորին, թէ մարմնաւոր և թէ հոգեւոր, մեր պաշտօն հաւասարութեամբ և որտի մտօք կատարե՞ր ենք, մեր պարտաւորութիւններն դէպ ի մեր ծնողներն, մեր ուսուցիչներ, մեր հոգեւորականներ անթերի կատարե՞ր ենք :

Երրորդ՝ քննենք մեր ընթացք առաջի Աստուծոյ . իբրեւ քրիստոնեայք և իբրեւ Հայ . Եկեղեցւոյ զաւակունք հոգ տարե՞ր ենք կամ կրտանի՞նք Աւետարանի վարդապետութիւններ և Եկեղեցւոյ պատուէրներ ուսանիլ և մեր կենցաղավարութիւն նորա համեմատ կարգադրել : Եկեղեցւոյ հաստատեալ տօներ և պահքեր հաւաստով և բարեպաշտու-

Թեամբ կըպահէնք, սրբազան խորհրդոց կըմամանակցինք, ժամանակ առ ժամանակ Գրիստոսի սուրբ Մարմնոյ և Արևան հաղորդութեան կըմերձենամք, մեր առօրեայ աղօթքն մեր տան մէջ առանձնաբար կամ ընտանեաց շրջանի մէջ կըմատուցանեմք առ Աստուած, թէ հեթանոսաբար կ'ապրինք առանց Աստուծոյ :

Այս է մի նմոյշ առաքինութեան հաշուեկշիռն պատրաստելու, քրիստոնէապաշտել կենցաղաւարութեան մէջ զարգանալու : Այսօր զձեզ Եկեղեցին կըկոչէ որ այդ հոգեւոր քննութեան ձեռնարկէք ի պատրաստութիւն առաջիկայ Վարդապետի մեծ տօնին զոր պիտի կատարենք ի մօտոյ. մեր սիրտն ու հոգին պիտի մաքրենք մեղաց աղակերպութենէն, որ կարողանանք արժանաւորապէս ընդունել մեր Փրկիչն որ Թափօրական լերան վերայ աստուածային փառօք այլակերպեցաւ. մեր սիրտն ու մեր հոգին շինենք տաճար վայելուչ արժանի ընկուծութեան Հոգւոյն Արբոյ :

Այս առանձնական նախապատրաստութիւնն ձեր մտայ և սրբտեղի մէջ կատարելէն յետ, մի ուրիշ պարտաւորութիւն ևս ունիք որ առաջնոյն շարունակութիւնն է, և անհրաժեշտ է թէ ձեր մտաց անդորրութեան համար և թէ Աստուծոյ կատարեալ ներդրութեան և շնորհաց արժանանալու համար : Գրիստոսի պատուիրանի հիման վերայ Եկեղեցին յանձնած է իւր քահանայից իշխանութիւն կապելոյ և արձակելոյ, ժողովրդեան հոգեւոր ցաւերն ու վիշտերն ստուգելու, քննելու և դարման տանելու. բարի խորհրդով և խրատներով զնոսա քաջալերելու, որ առաքինութեանց մէջ յարատեւէն և հոգեւոր թշնամւոյն ոտնձգութեանց զէմ գնեն : Արդարեւ այս պաշտօն քահանայն արդէն մասամբ իւր կըկատարէ հրապարակային քարոզութեամբ. բայց հրապարակային քարոզն կարող է միայն ընդհանուր խրատներ աւանդել. իւրաքանչիւր անհատ քրիստոնեայ առանձին հոգատարարութեան պէտք ունի, իւրաքանչիւրի անհատական պիտոյից համար առանձին խնամք պէտք է : Այն խրատն որ երիտասարդին առանձնաբար տալ հարկ կըլինի՝ ծերի համար գուցէ աւելորդ լինի, զեռատի մանուկի հետ ուրիշ ոճով պիտի խօսէ քահանայն և չափահասի հետ՝ ուրիշ : Խրատ տալէն զատ քահանայի պարտաւորութիւնն է ապաշխարող և զղջացող մեղաւորին իւր մեղաց կապանքէն արձակել. քանզի ով որ մեղաց մէջ կըգտնուի՝ Աստուծոյ դատապարտութեան ներքոյ է և իբր թէ կապուած է, և մի-

այն այն ժամանակ կ'աղատուի այդ կապանքէն և դատապարտութիւնէն, երբ Աստուծոյ փոխանորդն կամ գործակատարն յանուն Աստուծոյ զայն արձակէ : Ու ստի քանի որ քահանայէն թողութիւն և արձակում չես ստացած՝ պարզապէս զղջալն բաւական չէ :

Ուրեմն հաւատացեալ եղբարք, մի՛ արհամարհէք մեր Փրկչի հրաման և մեր Եկեղեցւոյ հաստատուած օրէնքներն . մեր Սուրբ Մօր հետ խորհրութեամբ մի՛ վարուիք . այն մարդն որ տարին գոնէ երկու երեք անգամ Ապաշխարութեան և Ս. Հաղորդութեան խորհրդոց չի մերձենար, կերպով իմն ինքզինքն կըկտրէ Ս. Եկեղեցւոյ անդամակցութենէ : Ս. Հողորդութիւնն զմեզ միմեանց և Գրիստոսի հետ հաղորդելու՝ հոգեւորապէս կապելու նպատակ ունի : Որքան հեռու մնանք այդ Ս. Խորհուրդէն՝ այնքան աւելի կըհեռանանք քրիստոնէութենէ, և Աստուծոյ շնորհներէն ևս առաւել կըզրկուինք : Դուք մօտեցէք, Չեր պաւակներն ալ բերէք, եթէ զնոսա կըսիրէք, նոցա հոգւոց փրկութեան համար փոյթ ունիք : Իմ նուիրական պարաւարտութիւնս է որ զձեզ զընչացնեմ այն մեծ վտանգէն որ ձեր վաւակներին կըսպառնայ այս օտար երկրի մէջ : Եթէ Դուք զնոսա չուսուղանէք որ զան ի Սոստովանութիւն և ի Ս. Հաղորդութիւն, և այդ շնորհապարգեւ խորհրդով սերտիւ կապուին մեր Ս. Եկեղեցւոյ հետ, նոքա կորսուած պետի համարուին . կորսուած՝ մեր Եկեղեցիէն, կորսուած՝ մեր Ազգէն, կորսուած՝ նոյն իսկ ձեր ծնողական զիրկէն : Ի բոլոր սրտէ կըմաղթեմ որ Բարերարն Աստուած զձեզ և ձեր սիրասուն վաւակներն այսպիսի փորձանքէ հեռու պահէ . իւր սուրբ աջոյն և իւր սուրբ Եկեղեցւոյ հովանաւորութեան ներքոյ պահէ միշտ, որ ի մասին բարեպաշտութեան և հաւատարմութեան առ Հայ. Եկեղեցին՝ ձեզմէ՛ վար չմնան : Յիշեցէք Գրիստոսի խօսքերն երբ նորա աշակերտներն չէին թողուր որ մանուկներն նորա մօտ գան և նորա օրհնութիւնն ստանան . « Թող տուք մանկուոյդ՝ և մի արգելուք զընտպ գալ առ իս, զի այդպիսեացդ է արքայութիւն Աստուծոյ : » Եթէ Փրկչին կըկոչէ, մենք ի՞նչ իրաւունք ունիմք արգելելու կամ որ և է կերպիւ Տէրու՝ նական հրամանին հակառակ կենալու :

Ուրեմն պատրաստուեցէք և Այլակերպութեան սուրբ սօնին խմբովին մօտեցէք Աստուծոյ սուրբ սեղանին, մեծ և փոքր : « Ամենայն ինչ պատրաստ է, եկաք ի հարսանիս : » Եկաք և վայելեցէք այն յաւիտենական բարիքներ զոր նա պատրաստած է ձեզ համար ի փրկութիւն հոգւոց ձերոց և ի փառս Ամենակալին, որում վայելէ փառք յաւիտեանս . Ամէն :

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Armenia: Travels and Studies. By H. F. B. LYNCH. With 197 Illustrations, reproduced from photographs and sketches by the Author, 16 Maps and Plans, a Bibliography, and a Map of Armenia and adjacent countries. Two vols., medium 8vo. Price 42s. net. Longmans, Green, and Co., London.

Հ. Ֆ. Բ. Լինչ, Հայք. Ուղեւորութիւնք և ուսումնասիրութիւնք. յերկու հասրու, 197 պատկերօք՝ հեղինակի իսկական ձեռանք առնուած յուսանկարներէ պատրաստեալ, տասնվեց աշխարհացոյց եւ յաստիպիծ քարտուկերով, մասենագիտութեանք եւ նիւրոյց ցանկով. յոր կցեալ է մի քննարձակ աշխարհացոյց Հայոց եւ շրջակայ երկրաց: Հրատարակիչ, Լոնդոնսկս, Գրիկ եւ Էնկ. Լոնդոն 1901. Գիւնն է՝ անգլեց 42 Շիլինգ:

Երբ մի քանի տարւով յառաջ Պարոն Լինչի անունը յաճախ կը կարգայինք ազգային լրագրաց մէջ, նորա՝ հայաբնակ եւ հայապատում երկրաց մէջ կատարած ուղեւորութեանց լուրը կ'առնէինք, մեր ազգայնոց բնածին հիւրասիրութեան ցոյցերը կը տեսնէինք — զոր երբեմն ևս չափազանցելու սովոր եմք, մանաւանդ երբ մեր առարկայն Պարոն Լինչի արժանաւորութիւնն ունեցող մէկն է — չատերուս մտքէն չէր անցնէր, և գուցէ այն միջոցին նոյն իսկ Պարոն Լինչի մտքէն ևս չէր անցնէր, որ զկրի հինգ վեց ամաց ի լոյս պիտի բնծայուէր իբրև պատու այնր ամենայնի՝ այն հսկայ երկհատոր գործն զոր մեր առջեւ ունիմք: Նոյնիսկ երբ նորա հմտալից յօդուածներն այլ և այլ անդլիական թերթերու և հանդէսներու մէջ կը կարգայինք, դարձեալ այս՝ մեծ երկասիրութեան համար պատրաստուած չէինք: Պարոն Լինչ չի նմանիր այն սովորական եւրոպացի և ամերիկացի ճանապարհորդաց, որք հապճեպով քաղաքէ քաղաք և գիւղէ գիւղ կը վազվազեն, գլխաւոր չէնքերու և պատմական վայրաց հարեւանցի այցելութեամբ եւեթ կը շատանան, առանց գիտնալու նոցա կարեւորութիւնը անցելուն կամ նոցա հնախօսական նշանակութիւն ի լուսաբանութիւն պատմութեան, կրօնի և քաղաքակրթութեան անցնիւր ազդի. որք ոչ յառաջագոյն մտաւորապէս՝ կը պատ-

բաստուին իւրեանց տեանելիք երկիրներն և ժողովուրդներն լաւ ուսումնասիրելու, և ոչ տեանելէն վերջ շատ հոգ կըտանին ուղիղ ըմբռնել և ողջամիտ կերպով դատել . որոց նպատակն է « աշխարհատեսութիւն , » և Արեւելեանս երկրաց նկատմամբ Արաբական վիպաց նախապաշարմամբ կըտեսնեն ու կըլսեն ինչ որ տեսնել ու լսել վճռած են , և իւրեանց վերադարձին զուարճալի անցքեր պատմել՝ բազմապատիկ վերնագիրներով և այլափոխութեամբք, և ծիծաղ ու դրօսանք պատճառել — որ արդարեւ՝ ծիծաղելի և զուարճալի է : Սակայն Պարոն Լինչ բոլորովին սարբեր դասակարգի կըպատկանի . կամ աւելի լաւ , մի փայլուն բացատրութիւն կըհանդիսանայ : Արտաքոյ կարգի ճրիւք և լեզուական ու բազմակողմանի դիտութեանց հմտութեամբ օժտուալ , ուղեւորութեան ձեռնարկելէ յառաջ ինքզինքն լաւ պատրաստած էր՝ ինչքան որ կարելի է գրքերէ և ուրիշ ճանապարհորդաց փորձառութենէ օգտուելով պատրաստուիլ : Պարոն Լինչի այս մեծ երկասիրութիւնն աւելի Հայր Ալիշանի տեղագրական մեծահատոր գրոց կընմանի քան թէ մի պարզ ճանապարհորդական նկարագրութեան . և տարբերութիւնն այն է որ մինչդեռ Հայր Ալիշան խուցին մէջ նստած այլոց տեսածներն ու պատմածներն մեծ ինամքով ի մի հաւաքելով՝ կըպատմէ իրեն յատուկ գերազանց ոճով , Պարոն Լինչ անգլիական գործնականութեամբ՝ թուղթ ու գրիչ , չափ ու կշիռ , լուսանկարչութեան և ինքնաքնին հետազօտութեան համար պէտք եղած ամեն միջոց ու գործիք իւր հետ առնելով , անձամբ կ'այցելէ իւր նկարագրելի վայրերն ու հաստատութիւններն ու անձերն , կըքննէ ու կըկշռէ ու կըչափէ իւր ձեռքով , լուսանկար պատկերներն կըհանէ , այլոց մասնակի ստուգածն ինքն աւելի կատարելութեամբ և ճշգրութեամբ կըստուգէ : Արդարեւ ուրիշ մեծանուն ճամբորդներ ևս Պարոն Լինչէն յառաջ Տաճկաստանի և Կովկասի այլ և այլ հայաբնակ գաւառներ այցելած և տեղագրական երկեր թողած են . սակայն կըհամարձակիմք ասել՝ թէ մինչ ցարզ ոչ մին այնքան ընդարձակ տեղերու վերայ , այնքան բազմադիմի՝ իւր ձեռնարկութեան յարակից ինդիքներու վերայ , այնքան հմուտ, ամփոփ և մեկին կերպով գրած է որքան Պարոն Լինչ կ'ընծայէ մեզ իւր ներկայ գրուածով :

Երկու հատորներն Հայոց երկու գլխաւոր բնակավայրաց նկարագրութեան նուիրեալ են . առաջին հատորն՝ Ռուսահայ գաւառաց կըպատկանի , իսկ երկրորդն՝ Տաճկական

զատուաց : Պարկաստանի և Միջագետաց մէջ կատարած նախորդ երկամեայ ճանապարհորդութիւնէն զատ— որ առթիւ Հայոց սահմաններն ևս փոքր ի շատէ ճանաչելու առիթ ունեցած է — 1893ին և 1898ին մասնաւորապէս իւր ներկայ գրքի շարժառիթն եղող երկիրներն այցելած է : Առաջին անգամն Սեւ Մուկէն (Տրապիզոնի և Բաթումի վրայէն) Կովկաս կը մտնէ . Ախալցխա , Ալէքսանդրօպօլ , Երեւան կ'այցելէ , Մեծ Մասիսի ծայրը կ'ելնէ , և նորէն Երեւան վերադառնալով՝ Էջմիածին կ'երթայ , և այժմեան Սրբազնատոյն Կաթողիկոսի օծման հանդիսին ներկայ կը զանուի : Էջմիածնէն յառաջ կ'երթայ՝ Անի և ապա Կարս կ'այցելէ . Կարսէն զէպ ի հարաւ կը մղէ՝ Արաքս գետէն անցնելով՝ Ալլրի Դաղ լեռնազաւտէն Տաճկաց սահմանագլուխ կը մտնէ Ալաշիկերտի մէջ : Տաճկաստանի մէջ իւր ուղեւորութիւնը շարունակելով՝ Վան քաղաք և ծովակը և անտի Բիթլիս , Մուշ , Կարին կ'այցելէ , և Բաբերդի ճանապարհաւ Տրապիզոն կը շատանի , ուր կը վերջացնէ իւր առաջին ուղեւորութիւնն :

Հինգ տարի վերջ երկրորդ ուղեւորութեան կը ձեռնարկէ դարձեալ Տրապիզոն և ուղղակի ի Կարին , ան ի ի Խնիս , Թուրքիս՝ Մուրատ գետի ընթացքով ի Մելագիկերա և Ախալցխա . Նիմրուզ հրաբուխ լեռան գլուխ և Նազիկ ծովակ և Սիփան լեռն այցելելէ վերջ կը վերադառնայ զէպ ի հիւսիս : Բինգիւլ Դաղ լեռն ևս այցելելէն վերջ՝ իւր եկած ճանապարհաւ կը վերադառնայ Տրապիզոն :

Ուր որ ուսք գրած է Պարոն Լինչ , ինչ որ տեսած է իւր այցելած ընդարձակածաւալ երկրին մէջ , ի մտոյ կամ ի հետուստ , արուեստական կամ բնական , ամենաշեղծ ուշադրութեամբ և խորին հետաքննութեամբ ուսումնասիրած է . իւրաքանչիւր տեղի արդի կացութիւնը նկարագրելու միջոցին՝ նորս անցեալ պատմութիւնը , աշխարհագրական դիրքն , երկրաբանութիւնն ու բուսաբանութիւնն , կլիմայի և արտադրութեանց պարագայք , բազմամարդութիւնն ու ցեղաբանութիւնն պարզ ու գեղեցիկ ու հետաքրքիր ոճով նկարագրած է , կարև գեղեցիկ՝ արուեստական մեծ ճաշակով պատրաստեալ պատկերներով լուսաբանուած , և աշխարհացոյց ընտիր տախտակներով զարդարուած : Մեր ազգային պատմութեան և աւանդութեանց ամենակարեւոր կէտերը ընտիր ևս հաճելի ոճով կ'ամփոփէ . այնպէս որ գիրքը ձեռք առնողը լրիւ կը կարգայ ամեն էջ , և որքան կը կարգայ այնքան աւելի կը սիրէ Պարոն Լինչի ոճն , այն-

քան աւելի կ'ուզէ կարգալ : Իւրաքանչիւր հատորի վերջ մէկ գլուխ նուիրուած է աշխարհագրական յոյժ պիտանի տեղեկութեանց : Քաղաքական և մարդահամարի գլուխներն, որ մեծ խնամքով և ամեն կարելի եղած աղբիւրների քնն-նութեամբ պատրաստուած են , ամենայն խելացի հայու խորին ուշադրութեան արժանի են : Ռուսաստանի և Տաճկաստանի այլ և այլ գաւառաց մէջ բնակուող Հայոց թիւերու մանրամասնութիւններն տալէն վերջ՝ աշխարհիս ամեն երկրի մէջ դասուած Հայոց համագումար թիւը կը համարի լի-սեղ 2, 427, 394 հոգի :

Իբրև յաւելուած կցուած է Պօլսթէնիայի և Տաճկահայոց Ա.գգ. Սահմանադրութեան օրէնքներ : Եւրոպական և հայկա-կան լեզուօք գրուած՝ իւր նիւթին վերաբերելի բոլոր գրոց ցուցակն՝ առարկայից և այբուբենի կարգաւ , և իւր գրքի նիւթոց մասնաւոր ցանկն՝ վերջին յաւելուածները կը կազմեն :

Ս.Ուլին հատորի վեշասաներորդ գլուխն (որ 37 իջերէ կը բաղկանայ) ամբողջովին նուիրուած է Ս. Էջմիածնի նկարագրութեան և Հայոց Եկեղեցւոյ սահմանադրութեան և սկզբնաւորութեան : Մեր աղբային այս ամենէն նուիրական սրբավայրի նկարագրութիւն բնականաբար հայ ընթերցողի խոր ուշադրութիւնը կը գրաւէ , մասաւանդ երբ Պարոն Լինչի պէս բանիբուն հեղինակ մի է խօսողն : Մեր տեսակէտով այս ամենէն կարեւոր գլուխն կարծես թէ արտաքոյ կարգի խնամքով և խղճի մտօք գրուած է : Նախ Ս. Էջմիածնի գլխաւոր շէնքեր մանրամասնօրէն կը նկարագրէ՝ իւրաքանչիւրի ներքին և արտաքին չափն ու պատկերն տալով . շատոնց (և նոյն իսկ Ս. Էջմիածնի մէջ բնակուող անձանց) անձանօթ մնացած և կարեւորութիւն չտացած հետաքրքիր մանրամասնութիւններ յերեւան բերելով : Օրինակի համար վանքի շրջափակն աշխարհիս ամենէն մեծ շրջափակն է , մերձ 400 ոտնաչափ երկարութիւնն է և մերձ 336 ոտնաչափ լայ-նութիւնն : Ս. Էջմիածնի գլխաւոր (Մայր) Եկեղեցւոյ երկայնութիւնն է 108 ոտնաչափ և 4 ինչ (եղունգ) , և լայնու-թիւնն է 98 ոտնաչափ : Մայր եկեղեցւոյ ներկայ շէնքի վերլուծումն զոր Պարոն Լինչ կը տայ՝ մեր Ս. Հայրապետի և Էջմիածնի պաշտօնէից խոր ուշադրութեան արժանի է : Եթէ ուրիշ գիտութեանց և արուեստից մէջ մէկ մարդու հեղի-նակած կամ շինած գործն ուրիշ մարդու ձեռքով փոփոխելն մեծ զգուշութեան կը կարօտի , և շատ անգամ ևս անյաջող կը լինի , հազար անգամ աւելի դժուարին է ճարտարապե-

տուժեան մէջ և մանաւանդ երբ հարիւրաւոր տարիներ կ'անցնին սկզբնական շինութենէն: Բայց մեր նախորդ Արքայան Կաթողիկոսներէն ոմանք այդպէս մտածած չեն. առանց սկզբնական ճարտարապետական նպատակն ի նկատի ունենալով՝ իրենց գիտցած եղանակաւ այլ և այլ փոփոխութիւններ և յաւելուածներ արած են: Մայր Եկեղեցւոյ սկզբնական ձեւն էր մի պարզ խաչաձեւ, և միայն մէկ գմբէթ ունէր խաչի մէջ տեղն: Եօթնհաւասաներորդ դարու մէջ Փիլիպպոս Կաթողիկոս աւելցուցած է այն անագին զանգազատուն որ բոլորովին կերպարանափոխած է ճարտարապետական սկզբնագիծն: Մի ուրիշ Կաթողիկոս երեք հաս փոքրիկ գմբէթներ աւելցուցած է խաչի թեւերու ծայրերն. իսկ Գէորգ Դ Կաթողիկոս արեւելեան կողմին կցած է զանձատունն, որ բոլորովին այլանդակած է Մայր Եկեղեցւոյնախիկին ձեւը, և զոր ամենէն դասապարտելի յաւելումը կընկատէ Պարոն Լինչ:

Հեղինակն շատ գոհ մնացած է Գէորգեան ձեռնարանէն, որ 150 էն մինչև 200 աշակերտ կը պահէ. տեղեկացած է որ վերջին 10 տարուայ մէջ ձեռնարանի ընթացաւարաններէն միայն 15 հոգի հոգեւորական զարձած են: Ձեռնարանի կարգու կանոնն շատ կը դուրս գար. աշակերտաց դրաքարանի մէջ շարուած յոյն և հռովմայեցի իմաստասիրաց արձանները տարրինակ կը գտնէ ձեռնարանի պէս հաստատութեան մէջ, ուր զատական (յոյն և լատին) լեզուաց ուսումն ուսումնաշըջանէն զուրս թողուած է:

Հայ Եկեղեցւոյ սկզբնաւորութեան վերայ ընդարձակօրէն կը գրէ. մեր ազգային ընկալեալ աւանդութիւնն պատմելէն վերջ, կ'աշխատի մեր եկեղեցական պատմութեան մութ երեւցած կէտերը լուսարանել նորագոյն եւրոպացի ականաւոր հեղինակաց և իւր իսկ հետազոտութեանց միջոցաւ: Ճարակոյս չունիմ որ Պարոն Լինչ ամենայն իղձի մտօք կը կատարէ զայս պաշտօն, և իւր ձեռնարկութեան սահմանի ներքոյ կընկատէ իրաւամբ գրել այս մասին ինչ որ գրած է: Եթէ ի հնունն (և մասամբ մինչև ցայսօր) նախապաշարուն և անապաշտութիւն ուղիղ զատողութեան արդեւք եղած են, ոչ ինչ նուազ արգելառիթ է ուղիղ խորհելու, այժմեան քայքայիչ քննադատութեան ոգին, որով կ'աշխատուի ամեն ինչ քիմիական բազարողութեանց նման տարբալուծել, քայքայել ու քանդել, և ապա քմածին հնթադրութեամբք վերակազմելու ջանքեր անել: Ուստի Պարոն Լինչ ևս իբրեւ առաջնակարգ եւրոպացի գիտնական՝ չի կրնար ներկայ դարու այս զօրաւոր

հոսանքէն հեռու մնալ: Գէլցըրի գրութիւն Բիւզանդի և մնացեալ հայ պատմաց և աւանդութեանց նկատմամբ, որպէս և Ս. Էջմիածնի և Աշտիշատի մասին հասած հետեւութիւններն (թէպէտ սակաւ մեղմացնելով), կ'ընդունի: Պարոն Կօնիբերի բոլորովին անհիմն գրութիւն ի մասին վարդապետութեան Հայոց նախկին Եկեղեցւոյ՝ կ'ընդգրկէ. Գաղկեդոնական խնդիրն ևս այնպէս կ'ըմբռնէ որպէս դժբախտաբար նոյն իսկ մեր Եկեղեցւոյ հոգևորականներէն շատեր տակաւին կ'ըմբռնեն՝ համարելով թէ իրապէս մի մեծ և էական վարդապետական տարբերութիւն կայ ի մէջ Հայկական և միւս (արեւելեան և արեւմտեան) Եկեղեցեաց ի մասին Բնութեան Քրիստոսի: Այս մի քանի բացառութիւններով Պարոն Լինչի բոլոր պիտողութիւնք և բարեկարգութեան ակնարկութիւնք մեզ համար անգին են. այն ինչ անուշիկ յանգիմանութիւն է զոր կուղղէ մեր Եկեղեցւոյ մէջ տիրող ներկայ ըստ մեծի մասին անախորժ երգեցողութեան, զոր նկարագրէ իբրև «Լառոյ շաւենքի շրնս եւ շնկ շե՛յս.» և չի հաւատար թէ այդ եղանակներ իրօք մեր նախկին (հինգերորդ դարու) երգիչ վարդապետներէ աւանդեալ են, ինչպէս որ այս տողեր գրողն ալ չի հաւատար: Սոսկում զգացած է տեսնելով Ս. Էջմիածնի Մատենադարանի գրասեղաններու վերայ այլ և այլ՝ անգին հնութիւն ունեցող ձեռագիրներ թափթփած, զորս ամեն յիմար ու իմաստուններս մտնող ձեռնահարելու և թղթատելու իրաւունք կ'ընամարէր: Ո՞ր վարդապետն կամ գրապետ կ'ընամարձակի նոյն իսկ ամենամեղմ և անուղղակի կերպիւ այցելուներին հասկացնել թէ այդ թանկագին հալարամեայ մատենաների հետ աւելի երկիւղածութեամբ վարուելու է. «Ազգի տունը չե՞ մի, Ազգի՛ սեփականութիւնը չե՞»: Գուցէ Պարոն Լինչի միտքէն անգամ անցած չէ որ Եւրոպիոյ թանգարանաց մէջ այսօր գտնուած հազարաւոր հայկական ձեռագիրներ այդպիսի նուիրական տեղերէ և այդպիսի պարագայից ներքոյ առանց անցազրի փախած են նոյն իսկ մեր անտէր և տէր չճանաչող ազգայնոց ձեռամբ:

Կրնայինք դեռ անթիւ վերին աստիճան հետաքրքիր տեղեկութիւններ քաղել. սակայն նախամեծար կ'ընամարինք այս սակաւ ծանօթութեամբն յանձնարարել ընթերցողին որ ինքն անձամբ կարդայ և զգայ ինչ որ մեր այս հակիրճ ծանօթութեամբք անկարելի է զգացնել:

ԱՌԱՋԱՐԿ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՏԵՆԻՑ

ՅԱՐԺ • ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏ ԱՒԱԳ ՔԱՅԱՆԱՅԷ ՊՅՅԱՃԵԱՆ .

(Շարունակութեան , Տես էջ 182)

Պատարագամատոյց

Տոյնպէս եթէ երկար յառաջարանութիւնն զնիցի ի սիկզբն մասնինն , թէ ո՛րպէս յառաջագոյն պատրաստիցի ժամարարն , և քաջայարմար գտանիցի ի սպասաւորութիւն Սեղանոյ Տեառն , և ի միջի ևս ուրեք ուրեք պարզարանութիւնք ի ձեւս և յարարողութիւնս : Վասն զի ամօք յառաջ վէճ իմն ծագի ի վանս Ս. Էջմիածնի , թէ ի «Միայն Սուրբ» ի վեր բարձրացուցանեմք զնշխարն սրբագործեալ . յասելն «Յիսուս Կրիստոս ի փառս Աստուծոյ Հօր» ընդ նշխարի ի միասին զՍկիհն բաժակաւ բարձրացուցանել օրէն իցէ , եթէ ուրոյն : Ս. Սինօզն ոչ կարէ հաստատել զմին կամ զմիւսն : — Զայսոսիկ պատմէր մեզ հանգուցեալ Մկրտիչ վարդապետ Տէրունեան , Կաթողիկոսական Այցելու Հովիւն մեր :

Շարական

Զայնքաղ Շարական հրատարակեալն ի սպարանի Արապեանց , յամի Տեառն 1838 , բազում ուրեք զհետ ընտիր դրչագրաց ընթանայ . և բարուք կարգաւորեալ է , վասն որոյ ոչ է ի բաց ընկենլի :

Տօնացոյց

Առաւել զժուարութիւն ի սմա տեսանի , ի բազում տեղիս ծանօթութիւնք պակասաւոր , յառաջագաս և բարձրատիճան եկեղեցականաց անգամ անիմանալի մնայ . անուանք Սրբոց երբեմն զուրկ յուզիղ ընթերցանութենէ . մերթ առանց քննութեան և անընտրողաբար տարապարտ և վարկպարագի կրկնութիւնք անուանց , զոր օրինակ յաւուր տօնի Անտանեայ՝ զՄատթէի զնիւլ փոխանակ Մատթեայ , որպէս հին օրացոյցք զնէին երբեմն . և Հ. Մկրտիչ Աւգերեան ի վարս Սրբոց : Ճառն Վարդավառի յանուն Եղիշէի մակագրեալ է , փոխանակ զնելոյ Բարսղի Կեսարացոյ , ըստ ձեռագրաց և հին սուրբութեան թերեւ Եղիշէ թարգմանիչ նմին լեալ

իցէ . անսովոր ոճը ի տպագրութեան Երուսաղէմի փոխանակ «Երկոտասանից առաքելոց» «Երկոտասանից վարդապետաց» կանխակալ սովորութեամբ պաշարեալ , և այլ բաղում ինչ զորոց եթէ թուուին մասանց առնեցեմք , զծանր տաղակութեանն զձանձրոյթ բերեմք ի լսելիս Ձեր . վասն որոյ համառօտս հատեալ թողուեք բարձր Սրբազնութեանդ Ձերում իմաստասիրել :

Ի նախընթաց երեկոյին՝ ի նախատօնակին Քառասնօրեայ դալատեանն Քրիստոսի ի տաճարն , զհնի (*) Քրիստոս փառաց տաղին , Տօնացոյցն բաւական համարի կեցո՞ ստելով , և ոչ նշանակէ զՔարոզի անուն , և զԱղօթիցն : Ի լուսանցս տպագիր տօնացուցից անսանեմք , կէսք՝ Սուրբ Եկեղեցեաւս և ի մէջ տաճարիս գրեալ են . այլք՝ Խնդրեսցուք և Առ դրան տաճարիս . և ոմանք՝ այլ ընդ այլոյ՝ անհամաձայն աւուրն պատշաճի : Մինչև ցարդ չէր ուրիշ ի մեզ երեւեալ երբէք ստուգագոյն գրութիւնն սորա . յայսմ ամի երեւեցաւ ի յօրացուցի Ս. Էջմիածնի , եղեալ Խնդրեսցուք և Քում ամենազօր , թերեւս ի դէպ : Այլ ինձ առաւել ուզողգոյն թուի նշանակեալն ի մշտնջինաւոր պարզատումարի Հ. Վրդանիսի Ասկէրեան , յորում քաջանմուտ հեղինակն ի ճան զիպեցուցանէ (Քրիստոսի) ծննդեան աւուրց , յերեկոյսն՝ Սուրբ զաստուածածին և Ընկալ Տէր , յառաւօտս Խնդրեսցուք և Քում ամենազօր » : Նոյնպէս յերեկոյին ի նախատօնակին Քառասնօրեայ դալատեան՝ Սուրբ զաստուածածին և Ընկալ տէր . յառաւօտուն՝ Խնդրեսցուք և Քում ամենազօր , որպէս և ի բուն յերեկոյի Տեառնընդառաջին ամենայն օրինակք առ հասարակ ունին Սուրբ զաստուածածին և Ընկալ տէր : Եթէ ի նախընթաց երեկոյին լինէր Խնդրեսցուք , և Քում աւուրցը , հարկ անհրաժեշտ էր յայնժամ և ի բուն երեկոյի Տեառնընդառաջին լինել Խնդրեսցուք և որ ի կարգին :

Թերեւս ոչինչ զանխուլ է ի Ձէնջ վէճն այն , որ ծագեցաւ երբեմն յաղագս Հայր Գլխածին՝ ի մէջ եկեղեցւոյն Չմիւռնիոյ , կէսք ի քանանայից ասել կամէին յաւուր Յիսանց , և այլք՝ ոչ : Հարցանեն ցԱռաջնորդն եկեղեցւոյն որ յայնժամ զաթոռն ունէր՝ Պօղոս Պատրիարքն Թաքթաքեան , և նա ի խորհուրդ մտանէ ընդ վարդապետին իւրում , չփոթին՝ խոռ-

(*) Կրինդրեմ՝ անցած տարուան Պօլոսյ օրացոյցը , այս տարուանին հետ բաղբատէք . յորում կըզտնաք երեք բան ընդունուած է մեր տեղեկագրէն . Ա. Հայր գլխած , Բ. Տեառնընդառաջի Սուրբ զԱստուածածին , Հակառակ Ս. Էջմիածնի Քում ամենազօրին . Գ. Անանեանց տօնէն Մատթէոսը վերցնելով Մասաթեայ դնել :

վին՝ և ոչ կարեն տալ զպարտուպատշաճ պատասխանին :
 Զայստիկ մեք լուսաք ի լուսահողի Գէորգ Եպիսկոպոսէ
 Իերձակեան, և յԱռաջնորդէ Կուտենայի և մեր :

Զօրինակս զայստիկ ի մէջ բերելով՝ ոչ եթէ զբարեհամ-
 բաւ արանց ոմանց զանունս աղարտել կամիմք, այլ զբանիցն
 ճշմարտութիւն պատմել հանգերձեալ եմք :

Յաղագս նախնեաց հերիք համարեալ էին այսչտի կարճա-
 ոս ո՞ ծանօթութիւնք ի Տօնացուցի, քանզի նոքա անգատին
 յանտիական հասակէ սկսեալ յեկեղեցւոյ ի վարժս արարողու-
 թեանց հրահանգեալ կրթէին առ ընթեր կիրթ և ներհուն եկեղե-
 ցականաց : Իսկ այժմեան դարուս քահանայք փոքր ինչ գիտու-
 թեամբ մատչեն ի պաշտօն քահանայութեան, և ոչ ունելով
 առնթերակաց հմուտ քահանայս, բազում անգամ մտացաթև
 համարձակին կատարել զարարողութիւնս :

Եպիսկոպոսունք ոմանք՝ այսր առ մեզ այցելուք, և կամ
 վարդապետք գաւառիս առաջնորդութեան վրձակեալք ին-
 քեանք իսկ ի գլխովին վեր ի վերոյ և հարեւանցիկ ինչ
 դեգերանօք անցեալ զեկեղեցական հմտութեամբք, ամենե-
 ւիմբ անգիտակք են կարեւորագունիցն անգամ մասանց
 Հայ : Սուրբ Եկեղեցւոյ արարողութեանց : Յաւուրս դա-
 սախօտութեան մերում Տիմոթէոս ոմն անուն վարդապետ
 ի սոհմէ Հանէսեսն, ծայրագոյն իշխանութեամբ պերճացեալ,
 որ անհամեմատ բարձրամտութեամբ իւրով՝ կարծէք զինքն
 գեր ի վերոյ լինել ամենայն վարդապետաց՝ յառաջ քան
 զինքն եկելոց :

Իբրև հարցաւ ի ժողովրդականացն, եթէ « Արժա՞ն իցէ
 սրբալոյս միւռոնաւ օձանել գիսչն որ ի վերայ գագաթան Ս.
 Եկեղեցւոյ », ոչինչ ընդհատ ի տղայօրէն խակամութենէն
 է պատասխանի, թէ « Հռովմէական վարդապետաց հարցանելի
 է, վասնզի այսպիսի իրաց նոքա են տեղեակք » : Յայն-
 ժամ որք ի լուր պատգամիս յակճիռս կային ժողովուրդք,
 ժպտելով արտաքս ելին յԱռաջնորդարանէն : — Նմանակի
 իմա՞ և զայլս :

Այլ՝ քանզի Դուք, Սրբազան Հայր, ամենայն ուսմամբ և գի-
 տութեամբ բարգաւաճեալ էք և պայծառացեալ, և միանգամայն
 իմաստուն եկեղեցականաց դասուք չքշապատեալ, գիտեմ ընդ-
 ունայն խժբիժ թուիցին բանքս մեր այսօր առաջի Սրբալնու-
 թեանդ Չերոյ և պատկառելի Փողովոյդ :

Այլ իբրև Քահանայապետ Եկեղեցւոյ աղաչեմ զքեզ զանց
 զգրականութեանս անհեթեթ տողանւոյս արարեալ, յեռանդ-

նախապի աշխոյժս սրտիս յառեսջիք, և միանգամ բարեհա-
ձեռնիք ակնարկել յեկեղեցիս, որք ի հեռաւոր վայրս գտա-
նին, յայնժամ իրաւացի դատէք զառ ի մէնջ ասացեալս:

Վերնախնամ Տեսչութիւնն՝ աւուրց Գոց պահեալ է զայս
յետին կարգաւորութիւն՝ Եկեղեցւոյ, կարողիդ և լիազօր
իշխանութիւն ունողիդ:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԷՆ

Անցնջելիութիւն Բաւեանայական Աստիճանի:

Արժանապատիւ Ս. Եղբայր ի Քրիստոս,

Այս անգամ Ձեզ գրածս մի առանձնական նա-
մակը հրատարակելէդ դժգոհ իմ:

Այն դիտողութիւնը հրատարակելու համար չըրի, այլ Ձեր
զանց ըրած մէկ կէտը Ձեզ յիշեցնել ուզեցի:

Ձեր առաջարկն ոչ հերքած իմ և ոչ մերժած, այլ առանձին
մտերմական նամակի մէջ՝ լոկ ի գիտութիւն Ձեզ դիտողու-
թիւն մի ըրած եմ, որ վերստին նոյն նիւթին վրայ զրած
ատենդ իմ դիտողութիւնս ալ ուշադրութեան առնես:

Ներկայ պատասխանդ իմ դիտողութեանս չէր պատկաներ.
կերեւի զայն առիթ առնելով ուրիշ յօդուած մը գրել ուզած
էք, թէ և կրնայիք առանց անոր ալ գրել:

Ես քահանայական սուրբ աստիճանի ըստ ինքեան բարձ-
րութիւնը գիտեմ և մեր քահանայից այդ բարձրութեան
հասնելուն ջերմ ցանկացողներէն եմ. այս պատճառաւ է
որ անկարգ և մոլի քահանայից պաշտօնի վերայ մնալը չեմ
կամիր: Եպիսկոպոսին պարտքն է ատանկները ժամանակա-
ւոր պատիժներէն յետոյ եթէ չուզողին՝ իսպառ լուծել և
մերժել պաշտօնէն. քահանայական աստիճանը կուղէ ջնջուի
կուղէ չը ջնջուի: Բայց իմ տկար զատողութեամբ, (ոչ
աստուածաբանական եզրակացութեամբ) այնպիսի միայն ան-
ուամբ և արտաքին ձեւով քահանայից վերայ սուրբ աստի-
ճանը արդէն հաստատուած չէ որ ջնջուի կամ ոչ. քանզի
եթէ հաստատուած լինէր, պիտի ձանձար աստիճանին
բարձրութիւնը և սրբութիւնը, և անոր հակառակ անկար-

գրութիւն չը պիտի գործէր: Մանաւանդ քահանայն երբ կը գործէ անանկ յանցանք մը, որ աստիճանին միջոցաւ միայն կրնայ գործել, թէ որ աստիճանը չը լինէր չը պիտի կրնար, ըսել է աստիճանը չարաչար գործածեր է, այնպիսին անմիջապէս լուծել պէտք է:

Ես քահանային գիտութիւնը չեմ սահմանափակեր, այլ կ'ուղեմ որ ըստ Ս. Գրոց՝ իր աստիճանին և պաշտօնին պահանջած գիտութիւն ունենայ. մանաւանդ կը փոփաքիմ որ վարքով և բարքով խիստ բարձր աստիճանի վերայ լինի, ինչպէս որ աստիճանին յոյժ կարեւոր պահանջն է:

Բայց, այս ալ իմ կարծիքս է, կարճ խօսքով, քահանայութիւնը բարձրացնելու համար ժողովուրդը պէտք է բարձրանայ ըրիստոնէական կրթութեամբ և ուսմամբ, որ թէ իր մէջէն կարողանայ քահանայացու տալ, և թէ գիտակցութեամբ ընտրէ իւր քահանայացուն. հաճոյականութեան (խաթեր) համար կամ ավրեցնելու համար քահանայ ձեռնադրել չը տայ:

Յառաջիկայ թուով զայս հրատարակելիք ինչպիսիով՝ կը մնամ
բարեացակամ աղօթող

յերուսաղեմ, 28 Մայիս 1901

ՍԱՄԲԷ ԵՍՍ ՍԱՐԿՈՍԵԱՆՑ

Կըցաւինք որ Մամբէ Եպիսկոպոսի յիշեալ գրութեան հրատարակութիւն նորին Սը. ազնութեան դժգոհութեան պատճառ տուած է: Եւ յամբարութեանն ուղղեալ կրօնական նիւթոց վերայ գրուած նամակներ թէ աշխարհականներէ և թէ հոգեւորականներէ կը սիրեմք հրատարակել՝ մեր ժողովրդեան կրօնական հայեացքներ յերեւան բերելու և կրօնական իրաց մէջ հարցասիրութիւնը քաշալերելու համար: Գալով նամակի նիւթին և Մամբէ Սը. ազնի ներկայ գրութեան, ոչինչ բան այնքան մօտ է մեր սրտին և կրօնաթերթիս նպատակին որքան մեր եկեղեցականաց որպէս մտաւոր և նիւթական նոյնպէս և առաւել քան զամենայն բարոյական և հոգեւոր բարձրացումն: Նոյն իսկ այս բարոյական բարձրացման մեծապէս կը նպաստէ երբ ընտրոյ ժողովուրդն ու ձեռնադրող եպիսկոպոսն քահանայական աստիճանի անջնջելիութեան գիտակցութեամբ ընտրին ու ձեռնադրեն՝ մի միայն կատարելապէս արժանաւորներ: Իւրաքանչիւր ձեռնադրուողի արժանաւորութիւն բաղդին կամ տիրող պարագայից թողնելու չէ: Այս չար աշխարհի ու ժամանակի մէջ բաւական չէ ասել « Գահանայութիւնը բարձրացնելու համար ժողովուրդը նախ բարձրացնելու է քրիստոնէական ուսմամբ և կրթութեամբ: » Արդեօք ո՞րն է դիւրին, ամբողջ ժողովուրդ մի կրթել, թէ մի քանի երիտասարդներ ընտրելով գիտութեան և վարուց սրբութեան մէջ

հրահանգել ու վարժեցնել ի պատրաստութիւն քահանայութեան: Կամ ինչ միջոցաւ կը յուսացուի ժողովուրդը կրթել կրօնի և սրբութեան մէջ, քանի որ կրօնի և սրբութեան պաշտօնեայք ինքնին անտեղեակ և անվարժ են այդ կրօնի յատկութեանց: Ս. Գրիգոր Լուսաւորիչ չըսկասեց մինչեւ ժողովուրդը ինքնին լուսաւորուէր, այլ գրեթէ բռնութեամբ լուսաւորեց Հայոց Աղան, Արեւմուտքէն բանիբուն քարոզիչներ և հոգեւորականներ բերել տուաւ որ իրեն օգնեն՝ ժողովրդեան մէջ Ս. Աւետարանի լոյսը տարածելու:

Իայց քահանայութեան անջնջելիութիւնը միայն մի գործնական նպատակի հասնելու համար հնարուած չէ, այլ քրիստոնէական կրօնի ամենակարեւոր վարդապետութիւններէն մին է, որ Եկեղեցւոյ նուիրապետութեան բարձրագոյն աստիճաններն (մասնաւորապէս քահանայութիւն և եպիսկոպոսութիւն) անջնջելի կը դաւանի, որոյ հետ կապուած է նոյն իսկ Եկեղեցւոյ գոյութիւնը:—

Եթէ անարժան քահանայն կարգալքած առնել (ըստ մեզ՝ պատժել) պէտք է, ըստ այն դրութեան թէ այնպիսի քահանայից վերայ «սուրբ աստիճանը արդէն հաստատուած չէ որ ջնջուի կամ ոչ,» ուրեմն ո՞րքան առաւել պէտք է ձեռնադրող եպիսկոպոսն կարգաւք լքած առնել, որք մեր մէջ ներկայ տիրող գրեթէ ընդհանուր սովորութեան համեմատ առանց Մաշտոցի օրէնքն ի նկատի ունենալու անարժան քահանայից թիւը կը բազմացնեն կամ «Հաճոյականութեան համար կամ ապրեցնելու համար,» որ պարագային, չմոռնանք ասել, սիմոնականութիւնը (կուզէք «աջնամբոյ» ըսէք) շատ մեծ դեր կը խաղայ. և ժողովուրդը տգէտ է ասելով՝ մէջէն կեղնէնք: Չէ՞ք կարծեր որ անարժան քահանայ ձեռնադրող եպիսկոպոսն իւր պաշտօնի միջոցաւ շատ աւելի չարաչար կը մեղանչէ քան թէ որ և է քահանայի համար կարելիութիւն կայ մեղանչելու: Եթէ եպիսկոպոսութիւնն ևս ջնջելի նկատել կ'առաջարկուի, յայնժամ պիտի սկսինք տարակուսիլ նոյն իսկ Եկեղեցւոյ յարատեւ գոյութեան համար: Այսու հանգերձ Մամբրէ Սըբազանին կատարելապէս համամիտ ենք ըստ գործնականին, և անաստ եկեղեցականը, լինի նա սարկաւազ, քահանայ կամ եպիսկոպոս, կրնայ իւր մեղաց մէջ մեռնել, ինչպէս Յուդաս իսկարիոտացին մեռաւ. որ սակայն եթէ իրապիս զղջացած լինէր, տարակոյս չունիմք որ թողութեան պիտի արժանանար և իւր առաքելութեան պաշտօն պիտի շարունակէր նման Պետրոսի և այլոց Առաքելոց:

Ծան . հմբ:



ԵՐԿՈՒ ՈՍՈՒՆԵՐ

ՄԱՐՄԻՆ ՈՒ ՀՈԳԻՆ ԻՐԱՐՈՒ ԴԷՄ

ԳՐԵՑ ԱՐԺ . ՏԵՐ ԱԻԵՏԻՍ Վ.ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ .

(Շար . Տես եջ 192 ,)

Մարմին Վասնող

Տալուս մասին՝ միշտ եմ առատ .
 Եւ աղքատաց՝ յոյժ գըթառատ ,
 Ազահներէն՝ որոշ և զատ .
 Կեանք կը վարեմ՝ զերթ պայազատ :

Ազահներէն՝ կը խըլեմ հաց .
 Եւ կը բաժնեմ՝ զայն աղքատաց .
 Երբոր լինիմ՝ շատ գինովցած .
 Աշխարհքն ինձի՝ կըլլամ կարծած .

Ուր որ գըտնեմ՝ գինեպաններ .
 Չանոնք կընեմ՝ բարեկամներ .
 Երբոր պարպեմ՝ լիք բաժակներ .
 Անոնց կ'ուզընեմ՝ ջերմ մաղթանքներ :

Հոգին Իրաւադատ

Արդար վաստակ՝ եթէ կայ ըեզ .
 Չայն աղքատաց՝ պէտք է բաժնես .
 Թէ որ այս կերպ՝ նըւէր հանես .
 Բարեգործաց՝ իսկ նըման ես :

Բայց թէ գողնաս՝ և այլոց տաս .
 Չըկայ ըեզ վարձք՝ այլ պատուհաս .
 Չի աւագակ՝ ու գող կըլլաս .
 Նոցա մեղքէն՝ մաս կունենաս :

Ուր որ գըտնեմ՝ անառակներ .
 Չանոնք կընես՝ խեղճ աղքատներ .
 Ուրեմն յիմար՝ ես գըտնըւեր .
 Որ բարեգործ՝ ես կարծըւեր :

Մարմին Ազատ

Աշխատանքէս՝ ամէն անգամ .
 Չեմ բաւական՝ թէ այլոց տամ .
 Պէտք է ըստակ՝ շատ ունենամ .
 Որ նեղ ատենս՝ խեղճ չը մընամ :

Աղքատներուն՝ առատօրէն .
 Կանի որ տամ՝ կուզին նորէն .
 Պարտաւոր չեմ՝ ես կուրօրէն .
 Տալ շայնպիսեաց՝ որ չէ՝ օրէն :

Որքան ըստակ՝ որ ձեռքըս գայ .
 Պիտի պահեմ՝ ես զանիկայ .
 Ձի այն է ինձ՝ մեծ ապագայ .
 Որով սրբախ՝ հըրճուանք կուգայ :

Հոգին Խրատիչ

Երբոր մեռնիս՝ ազա՛հ մարմին .
 Կու ժողվածներդ՝ որու՞ բաժին .
 Պիտի թողուս՝ կրթաս անդին .
 Ձի դառնալդ է՝ անհընարին :

Հոգածութիւնն՝ է աւելորդ .
 Ազահութիւնն՝ ալ կրծող որդ .
 Տիրոջ շքնորհքն՝ առատայորդ .
 Որուն ամէնքս՝ ենք բաժանորդ .

Ողորմութիւնդ՝ երբոր կ'ուտաս
 Աղքատներուն՝ չըլլայ զըզլաս .
 Ձի Աստուծոյ՝ տրւած կ'ըլլաս .
 Եւ անորմէ՝ վարձք կըստանաս :

Մարմին Չարախնդաց

Մարդոց վըրայ՝ թէ բիծ տեսնամ .
 Կամ փոքրը մի՛ յանցանք գըտնամ .
 Խիստ չափէ՛ զուրս՝ կուբախանամ .
 Ձի զայն հաճոյք՝ ինձ կուեննամ :

Այլոց վընասն՝ ինձի խընճոյք .
 Բամբասանքն ալ՝ խիստ մեծ հաճոյք .
 Մէկ հատ յանցանք՝ աչքիս է զոյգ .
 Սուտ ալ լինի՛ ինձ է ըստոյգ :

Այլոց վըրայ՝ եմ նախանճող .
 Նոցա համար՝ խիստ չարացող .
 Ունեցածնուն՝ եմ ցանկացող .
 Տեսածներուս՝ աչք եմ զարնող :

Հոգիւն Յանդիմանիչ

Ո՛վ ժանտ մարմին՝ չարանախանձ .
 Որ կը խանձես՝ նախ դու քու անձ .
 Թէ չը փըստես՝ մոլեկան մաղձ .
 Վերջ կը լինիս՝ զըժոխախանձ :

Որքան լինիս՝ բամբաստներ .
 Այլոց մեղաց՝ կը լինիս տէր .
 Թէ որ բլաս՝ դու վատչըներ .
 Չար գիւաց ես՝ անձնանուէր :

Քու հաճոյքներ՝ գիւաց մեծ կայթ .
 Իմ կորըստեանս՝ դու որողայթ .
 Ո՛վ գարչելի՛ և բարկահայթ .
 Մինչև յի՞րբ լամ՝ ես քու վըրայդ :

Մարմին Հայեոյիչ

Այլոց յանցանքն՝ եմ նըկատող .
 Յանցաւորներն՝ արգէն ատող .
 Նոցա մէջէն՝ եմ զիս զատող .
 Հայեոյելով՝ զանոնք դատող :

Երբոր խօսիմ՝ հայեոյանքներ .
 Կը զովանան՝ իմին թորեր .
 Որովհետև՝ չեմ անտարբեր .
 Իբր անըզգայ՝ լըռող մարդեր :

Չեմ ես ներեր՝ ապուշ մարդուն .
 Որ սիրած է՝ համբերութիւն .
 Մեծ միշտ կընէ՝ զանի արթուն .
 Որ խըրատուի՝ լինի գիտուն :

Հոգիւն Յանդիմանիչ

Քանի որ դու՝ ազտեղի ես .
 Ուրիշի աղտ՝ պէտք չէ սըրբես .
 Այլ թէ աչքիդ՝ գերան քըննես .
 Ընկերիդ շիւղ՝ դու զանց կընես :

Չուր տեղ դու միշտ՝ կը բարկանաս .
 Եւ հահոյանք՝ այլոց կուտաս .
 Ձի գեւեր քեզ՝ կուտան այդ դաս .
 Որ մարդագայլ՝ գազան դառնաս :

Համբերող մարդն՝ օրինակ ա՛ն .
 Որ անմեղ է՝ իբրեւ ըզգառ .
 Այլոց խօսքին՝ չէ՛ հակահառ .
 Իւր գործերով՝ բարեաց պատճառ :

Մարմին Աստուծոյ հակառակ

Յաճախ քու խօսքն՝ է ասիկայ .
 Որ միշտ կըսես՝ թէ Աստուած կայ .
 Ամէն մարդուն՝ իւր ձիրք կուտայ .
 Ամէնուն պէտք՝ միշտ կը հոգայ :

Ուրեմն ասոնք՝ ինչու՞ համար .
 Իրարու չեն՝ հարթ հաւասար .
 Մէկ զօրաւոր , մէկն է տրկար .
 Մէկ մեծատուն , մէկն է Ղաղարք :

Ասոնց համար՝ բընաւ գոհ չեմ .
 Աստուծոյ դէմ՝ կը տըրտընջեմ .
 Իրաւունքով՝ միշտ կը գոչեմ .
 Եւ վըստահ եմ . որ սըխալ չեմ :

Հոգին Իրաւապաս

Աստուծոյ գործ՝ դուն չես գիտցած .
 Եւ նորա դէմն՝ ես մեղանչած .
 Շիտակ գործքեր՝ ծուռ ես մեկնած .
 Յանդըզնութեանդ՝ չափն անցուցած :

Հարուստին պարտքն՝ է ողորմել .
 Աղքատներուն՝, և միշտ օգնել .
 Աղքատին պարտքն՝ է համբերել .
 Իւր բարերարն՝ ալ միշտ օրհնել :

Այսպէս հարուստ՝ և աղքատներ .
 Աստուծամէ՛ են՝ սընօրինուեր ,
 Թէ կատարեն՝ իրենց պարտքեր .
 Կը ժառանգեն՝ երկնից փառքեր :


Մարմին Աստուծոյ դէմ Ապասամբ

Որչափ հետքս՝ վիճարանես .
 Յիսուսի խօսք՝ կը պաշտպանես .
 Իմին խօսքեր՝ սուտ կը հանես .
 Եւ Յիսուսին՝ իրաւ կանես :

Յիսուսի խօսքն՝ ինծի համար .
 Արժէք չունի , երեսս մի՛ տար .
 Զի նորա բանք՝ ծանր ու դժժուար .
 Իեռ ու լուծ են՝, չեն ինձ յարմար .

Յիսուսի խօսքն՝ անձուկ ու նեղ .
 Ճանապարհ է՝, խիստ փըշաղեղ .
 Երբ մըտածեմ՝ զանի շատ հեղ .
 Կը խանգարի՛ գըլխիս ըղեղ .

(Շարունակելի)



Ա Ձ Դ

Կրօնաթերթիս անցեալ տարուայ թիւերն այլ ևս բաժանորդագրութեան պայմանաւ չեն ծախուեր. այլ Ա. - ժ թիւերն միասին կը վաճառուին՝ անկազմ 4 Շիլինկ (5 Ֆրանքի). գեղեցիկ կանաչագոյն լաթակազմով՝ ոսկեգօծեալ վերնագրով՝ 5 Շիլինկի (6 Ֆրանքի):

Յետայսու նոր բաժանորդագրութիւն կընդունուի միայն ներկայ տարւոյս Յունուարէն կամ Յուլիսէն:

